

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ԿԸ ՍՊԱՍԵՆՔ ՈՒՐԵՄՆ

Ինչպէս որ Նոր Կեանքի նախորդ թուով գրած էինք, Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը Արևմտեան Բիւրօին հետեւեալ նամակը ուղղեց.

Լսեառն, 23 Նոյեմբեր 1901

Հ. Յ. Դաշնակցութեան Արևմտեան Բիւրօին
Ժընէվ

Ազնիւ Հայրենակիցներ,

Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնս կը սպասէր որ Նոր Կեանքի 15րդ թուոյն մէջ Հայ յեղափոխական մարմիններու միութեան համար իր բրած հրապարակային կոչին վրայ՝ Հ. Յ. Դաշնակցութիւնն ալ հրապարակաւ իր կարծիքն ու տրամադրութիւնները պարզէր, իր օսկանին միջոցաւ:

Մինչև հիմա Դրօշակի մէջ տեսնուեցաւ միակ յայտարարութիւն մը, որով Արևմտեան Բիւրօն կը ծանուցանէր թէ Միութեան խնդրին համար չէզոքի մը տալիք վերջնական պատասխանին կը սպասէ:

Այդ մասին Կեդրոնական Վարչութիւնս իր կարծիքը յայտնած է Նոր Կեանքի 20րդ թուով:

Այն անկեղծ ու բաւական համակրութիւնը, զոր մեր կողմէ գտաւ Հայ ժողովուրդին բոլոր հատուածներուն մէջ, գրաւական մըն է արդէն թէ միութեան գաղափարին իրագործմանը համար հողը աւելի քան երբէք պատրաստ է և թէ այլ ևս յեղափոխական կուսակցութիւններուն ուրիշ բան չի մնար, բայց եթէ ուղղակի բանակցութեան մտնել իրարու հետ:

Կեդրոնական Վարչութիւնս՝ Հայ Յեղափոխութեան գերագոյն շահերուն ծառայելու համոզմամբ՝ պարագայ կը

համարի անմիջապէս եւ ուղղակի դիմել Դաշնակցութեան պատասխանատու մարմիններուն:

Եւ Միութեան իրականացումը փութացնելու ցանկութեամբ, խնդիրը գործնական հողի վրայ գնելու համար, ձեզ կը ներկայացնենք հետեւեալ պատճառներուն ներքեւ, որոնք պայմաններ չեն, այլ երկու կողմէն յանձն առնուելիք զօհողութիւններ:

Ա. Ձեզի Նոր Կեանք, Մարտ եւ Դրօշակ անուններով հրատարակուող օսկանները եւ միացեալ մարմնոյն իբրև միակ օսկան հրատարակել թերթ մը, տարբեր անունով:

Բ. Միացեալ մարմինը յորջորջել նոր անունով մը, որ երկու կուսակցութեանց անուններէն տարբեր ըլլայ:

Անգամ մը որ փոխադարձաբար Դաշնակցութիւնն ալ մեզ հետ ընդունի այս զօհողութիւնները, իսկոյն երկու կողմէն կ'ընտրուին մէկ կամ մէկէ աւելի լիազօր ներկայացուցիչներ, որոնք պաշտօն և իրաւասութիւն՝ պիտի ունենան:

1. Համաձայնութիւն գոյացնել Միութեան իրագործման համար միեւնի բոլոր կէտերուն վրայ, և որչափ միացեալ մարմնոյն և օսկանին անունները, ինչպէս նաև մշակել ընդհանուր կազմակերպութեան և գործունէութեան ծրագիրը:

2. Հրապարակային յայտարարութեամբ մը Միութեան իրագործուած ըլլալը հաշակել:

3. Հրաւիրել Դաշնակցութեան պատասխանատու մարմինները և Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը, որպէս զի մասնաւոր շրջաբերականով մը Հնչակեան և Դաշնակցական բոլոր մասնաճիւղերը ի մի ձուլեն:

4. Միութիւնը իբրև կատարուած իրողութիւն հրապարակուելէն ետքը, յանուն միացեալ մարմնոյն՝ ընդհանուր ժողովի հրաւիրել բոլոր մասնաճիւղերը, որոնք՝ աւելորդ է ըսել՝ պէտք է իրենց պատգամաւորները ղրկեն իբրև միացեալ մարմնոյն մասնաճիւղերը:

5. Ընդհանուր ժողովի վաւերացման ենթարկել ընդհանուր կազմակերպութեան, ծրագրի և գործունէութեան մասին այն բոլոր որոշումները, զոր իրենց բանակցութեանց մէջ լիազօրները զոյացուցած պիտի ըլլան կանխաւ:

Ահաւասիկ մէկ քանի հիմնական գիծեր, զորո՛ կը կրկնենք՝ կը ներկայացնենք ձեզ, ո՛չ թէ իբրեւ պայման, ներ, այլ իբրև զոհողութիւններ և անմիջապէս որոշ արդիւնքի մը հասնելու գործնական միջոցներ, որոնց երկու կողմէ ընդունուելովը՝ մենք կը հաւատանք՝ թէ ամբողջ ազգին այնքան բաղձալի Միութիւնը վերջապէս պիտի կրնայ իրականանալ:

Կը սպասենք Դաշնակցութեան Արևմտեան Բիւրօին կամ պատասխանատու մարմիններուն վաղընդփոյթ պատասխանին:

Ընդունեցէք, ազնիւ հայրենակիցներ, մեր սիրալիբ բարկները:

Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան կողմէ՝

Առննազպիր

Առննապետ

(Ստորագրութիւն) ԿՆԻՔ (Ստորագրութիւն)

Մեր խօստման համաձայն՝ ի օտօրե կը հրատարակենք Արևմտեան Բիւրօին մեր օտացած պատասխանը:

Երևի 29 Նոյեմբեր 1904

Վերակազմեալ

Հնչակեան Յեղ. Կուսակցութեան

Կեդրոնական Վարչութեան

Լօնտօն

Յարգելի Հայրենակիցներ,

Ստացանք ձեր նոյ. 23 թուակիր նամակը:

Նախ քան ձեզի պատասխանելը՝ հարկ համարեցինք կրկին անգամ դիմել Պ. Մխիթարին, խնդրելով որ անյապաղ հաղորդէ մեզի, թէ ուր յանգած է իր միջնորդութեամբ եղած բանակցութիւններու եզրակացութիւնը: Որովհետև բանակցութիւններու բոլորովին նոր ձեռնարկի մը դիմելէ առաջ, ըստ մեզ, աւելի բանաւոր ու հետևողական ըլլալ կը թուի հարցը փակել իր սկսած օրինական ձեւակերպութեան մէջ:

Պ. Մխիթարի մեզի խօստացած և դժբաղդաբար ցարդ յետաձգուած «վերջնական խօսքը» ստացուելուն պէս, մենք կը փութանք ձեզի հաղորդել Արևմտեան Բիւրօին կարծիքը ձեր առաջարկած ռազդակի բանակցութիւններու առթիւ:

Յարգանքներով

Արևմտեան Բիւրօ (ԿՆԻՔ)

Դաշնակցութեան Արևմտեան Բիւրօն հարկ կը համարի անգամ մը ևս դիմել Պ. Մխիթարին, հասկնալու համար թէ «ո՛ւր յանգած է անոր միջնորդութեամբ եղած բանակցութիւններու եզրակացութիւնը»:

Նոր Կեսանքի 20րդ թիւով և անոր հետ Արևմտեան

Բիւրօին ուղղուած մեր նամակով մենք պաշտօնապէս յայտարարած էինք թէ Հնչակեան Կուսակցութիւնը ո՛ր և է չէզօքի իրաւունք չէ տուած իր անունով խօսելու, բանակցելու, միջնորդելու:

Չենք գիտեր քանի՛բորոք անգամ ըլլալով կը կրկնենք, թէ Հնչակեան Կուսակցութիւնը սկզբունքով կը հակառակի յեղափոխական կուսակցութիւններու միջեւ Միութեան համար բանակցութիւնները չէզօքի մը յանձնելու գաղափարին: Եւ չենք կրնար ցաւ չյայտնել որ Արևմտեան Բիւրօն ժամանակ կը կորսնցնէ զարձեալ չէզօքի մը «վերջնական խօսք»ին սպասելով:

Մեր ընկերներէն մին, առկից ամիս մը առաջ, Պ. Մխիթարին անձամբ յայտնեց, թէ Հնչակեան Կուսակցութիւնը չի կրնար ընդունիլ ո՛ր և է չէզօքի միջնորդութիւնը, թէ Միութեան բանակցութիւնները ուղղակի Դաշնակցութեան վարիչ մարմնին կամ անոր կողմէ նշանակուած լիազօրներու հետ պիտի կատարէ, եւ թէ Պ. Մխիթարին հետ բանակցելու կրնայ հաւանիլ այն ատեն միայն, երբ Դաշնակցութեան կողմէ պաշտօնապէս ներկայանայ ան իբրև լիազօր:— Ահաւասիկ միակ «վերջնական խօսքը» զոր Պ. Մխիթար կրնար, և զոր արդէն պարտաւոր էր, հաղորդել Արևմտեան Բիւրօին:

Բայց այժմ չենք իսկ զբաղիր այդ խօսքը հաղորդած կամ չհաղորդած ըլլալուն խնդրով: Պ. Մխիթար ո՛ր և է պաշտօն օտանձնած չըլլալով ո՛չ Հնչակեաններէն, ո՛չ ալ Դաշնակցականներէն, իր ո՛ր և է խօսքը, կարծիքը կամ արարքը մեզի համար բնաւ կապ չեն կրնար ունենալ բանակցութիւններու հետ Միութեան մը որ պիտի կատարուի ո՛չ թէ Հնչակեան Կուսակցութեան և Պ. Մխիթարին միջեւ, այլ Հնչակեան և Դարձակեան կուսակցութեանց միջեւ:

Կը սպասենք ուրեմն որ Պ. Մխիթարի հացը փակելով, Արևմտեան Բիւրօն՝ իր խօստմանը համաձայն՝ փութայ մեզի հաղորդել իր կարծիքը «մեր առաջարկած ռազդակի բանակցութիւններուն առթիւ»:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ



ԱՋԱՏ ԽՕՍՔԵՐ

ԴՐՈՒԹԻՒՆԸ

ՊՐՈՒԹԻՒՆԸ

Վարկաբեկումի ու անուանարկութեան Դրութիւնը ըսել կ'ուզենք:

Ո՞վ ստեղծեց զայն մեր մէջ: Չպիտի ծանրանանք — ու անշուշտ կը գնահատուի մեր այս խղճահարու Թիւնը — այդ տիտը ու կնճառտ կէտին վրայ:

Բայց Դրութիւնը յղացան, հաշիւներու և տգեղ կիրքներու անիծուած օր մը: Անիկա շատանց արդէն գոյութիւն ունի, ու աւելի քան երբեք հրէշաւոր ու ոպանական համեմատութիւններ սկսած է առնել:

Ի՞նչ որ ալ ըլլան անուղղակի հետեւանքները, ի՞նչ որ ալ ըլլան թունդ ելած քինախնդրութիւններն ու ինքնապաշտպան նենգութիւնները, որոնք հարկաւորաբար պիտի գերազրգուին ու իրենց ծայրագոյն մտնեանութեամբը պոթկալով իսկ պիտի ոպաւին, օտակին լծնան՝ պէ՛տք է մաքաւիլ ու ամէն գնով վերջ մը տալ այդ դժնէ ու աղէտաւոր Դրութեան, խորտակել զայն իր բոլոր յայտնի ու դարանած պաշտօնեաններով: Որովհետեւ՝ տոնաց այս անհրաժեշտ քանդումին՝ ցիլ առնենք զրեթէ անկարելի պիտի ըլլար աս ազգին մէջ ո՛ր և է ազնիւ ու զեղեցիկ իրականացումի հետապնդիլ, ու՛ որքան ալ ամուր և անընկճելի ըլլայ հանրային ճշմարիտ գործիչներու հաւատքն ու կամքը՝ բոլոր բարեկամեցողութիւններն ու է՛ն սիրալի անձնութիւններն ու է՛ն փառաւոր զօհաբերութիւններն իսկ ապարդիւն և ընդունայն պիտի վատնուէին:

Դրութիւնը, որ այսօր յամբարէն բայց անընդհատ կը թունաւորէ հայ ժողովուրդը, անոր հոգին կը լեցնէ, կը մթաղնէ կասկածի, ատելութեան ու մատնութեան անագորոյն խոսովքովը, զայն վաղը անկարող ու ապրտամբ պիտի ընէ ո՛ր և է զիտակից ու փրկարար զարթնումի, ո՛ր և է հզօր ու արզաւանդ խանդավառութեան:

Որ՞ձն պիտի մտիկ ընէ, ալ որ՞ձն ետևէն պիտի երթայ ժողովուրդը, երբ Դրութիւնը՝ համարձակ ու անկաշկանդ՝ յաջողի ցեխտտել, մետակ, անդամալուծել անոր բոլոր մեծ ու փոքր առաջնորդները:

Այն ատեն է որ շուարումը, խտանակութիւնը, դատաւարութիւնը, այլաոերումը՝ իրենց գերադրական առաժնային հասած՝ պիտի խափանեն ազգային հաւաքական ամէն կեանք, պիտի վիժեցնեն իտէալական ամէն ճիգ կամ շարժում: Այն ատեն է որ արհամարհանքի ու զզուանքի գերեզմանաքարը պիտի ծանրանայ հայ հասարակութեան

աժօթալի ու վերջնական անկումին վրայ: Այն ատեն է որ մեր յաւիտեանական ու գասապարտուած օտրկութեան գիշերը պիտի սկսի...:



Հիմակուց արդէն, Դրութիւնը՝ անխօստովանելի նրկատուաճերու ծնունդ ու զիտակիցներէ յղացուած՝ հայցեղին բարոյապէս ու մտաւորապէս ամենէն ոսմիկ խաւերուն մէջ թափանցելով, հո՛ն մանաւանդ, է՛ն կոյր յարուսներն ապահովելու՝ եւ վարագ ու մոլեռանդ կուտակիցներ — զօհեր պէտք է ըսել աւելի — իր փորձող ցանցին մէջ առնելու վրայ է:

Օ՛ր դժնդակ հեշտութիւնը աւելուն, զրպարաւելուն, ապականելուն: Ամբողջ անասնացած ու խելայեղ ամբօխներ ատոր անձնատուր կ'ըլլան, ատով կը գինովան, ատոր մէջ կը փնտան գերագոյն յագուրդը՝ Դրութեան իրենց ջամբած ժահրովը լուսնոտած:

Վատութեան ծարաւին համար հոսող ու զայն յագեցնելով իսկ հրահրող լեղի աղբիւրն է Դրութիւնը: Անոր կը վազեն ցածերը, չարերը, խարուած կամ վարձուած ատեցողները, անոր բերնին կը դնեն իրենց շրթունքները, անկից կը խմեն, ու այրած, բոնկած հօգնեցող կը նետուին՝ նօրէ՛ն թքնելու, նօրէ՛ն փոխելու, նօրէ՛ն չորոցին հօտեցնելու համար:

Դրութիւնը զրպարտութեան դժոխային մեքենան է, զոր շարժողները, շատ անգամ, կարելի չէ տեսնել անոր վրայ, անոր քով, որուն իւրը օակայն երբեք չի պակօիր և որ միշտ կը դաճայ ու կը դաճայ:

Դրութիւնը վերէն եկած նենգաւոր թելադրանքն է, պատճառաբանեալ չքմեղանքն ու մեղսակից նօւրագործումը — շքեղ գաղափարներու անունով միշտ շտալուած — բոլոր ցածութիւններուն, բոլոր վատութիւններուն, բոլոր պաւերուն ու մատնութիւններուն:

Այսպէս, երբեմն ժառանգականօրէն չար ու օտոր՝ շատ անգամ անզիտակից ու անպատասխանատու մարդիկ — որոնց վայրկեանի մը իսկ հրապարակային գոյութիւնը չի կրնար բացատրուիլ, արդարանալ ու հօկայ այլանդակութիւն մըն է ինքնին, տրուած ըլլալով բարոյական ու մտաւորական իրենց նախառահմանեալ չընչութիւնը — ի՞նչ անարգներ, կամ տխուր ցաւագարներ՝ Դրութեան քաջալերուած, զրդուած ու յաճախ վարձուած՝ ապշեցուցիչ, անկարելի համարձակութիւնը կ'ունենան կոր ելլելու, իրենց անունները հրապարակելու, իմացնելու և աս ու ան ամբոտանելու, աս ու ան դատապարտելու, աս ու ան մետոնելու:

Ո՞վ են ատոնք: Ուսկի՞ց կուզան: Արեւուն տակ ապրելին միայն չի բաւեր իրենց:

Բայց պէտք չէ՛ օահմակիլ, պէտք չէ՛ գայթակղիլ այս տարորինակ, անբնական երեւոյթին առջեւ: Դրութիւնը, ամէն տեղ, իր մասնաւոր օտկաններն ունի — ապակա-

նութեան ու նիւթեան սովորական պատկանդարան- ներ—ուր մուտք գտնելու և սինակ սինակ փոսիլ եր- կըննալու համար հարկաւոր չեն տաղանդ, տիտղոս, կամ ո՛ր և է արժանիք: Կը բաւէ անկեղծօրէն ցած, խան- դավաորէն վարնոց ըլլալ, կը բաւէ անասնօրէն ուրա- նալու, վայրագօրէն սաելու ընդունակ՝ ու ամէն բանի ու ամէն մարդու վրայ փոխելու կարող ըլլալ, կը բաւէ մանաւանդ նոր ու անտիպ զրպարտութիւն մը բերել:

Ու աշխարհքիս երեօէն աննշան ու անյիշատակ անց- նելու, թաղուելու դատապարտուած գոյութիւններ, այս- պէս, մէկ օրէն միւսը հանրային ուշադրութիւնը իրենց վրայ գոնէ վայրկեան մը դարձուցած ըլլալու միթիթարար գինովութիւնը կ'ապրին, տժգոյն ու անկապակից էակներ՝ հազիւ մարդակերպ՝ իրենց շիւ ու մըլոտ անկիւններէն յանկարծ դուրս գալով կամ ըջուելով՝ օրօտան հերոս- ներն ըլլալով՝ իրենց իսկ անհաւատալի, զիրենք իսկ ապշեցնող անակնկալը կ'ունենան, կը վայելեն:

Ժողովուրդը—արտասահմանի գանազան կողմերը մասնաւորապէս—գրեթէ բոլորովին այլասերած, թու- նաւորուած՝ ա՛յլ իր բարոյական սնունդը կը փնտտէ Դրութեան այդ շարագօրծ օտկաններուն մէջ: Անոնք, հայ հասարակութեան մէկ ստուար մասին ա՛յլ գրեթէ հարկաւոր դարձած են ու կարծես կարելոր պակաս մը լրացնելու, բարոյական հասարակաց պէտք մը հոգալու անհեթեթ ու վրդովիչ հանգամանքը կ'առնեն հետզհետէ: Վերջնական նուիրագործութիւն ճամբան է որ արդէն բա- նալու վրայ են անոնք Դրութեան առջեւ:

Հիմակուց, հազիւ կարդալ գիտցողներն ու բնաւ չգիտցողներն իսկ, շաբաթը անգամ մը, երկու անգամ, ախտաւոր հետաքրքրութեան մը յագուրդին կը փութան շնչասպաս անոնց մէջ, անոնց շուրջը:

—Ի՞նչ կայ, ի՞նչ նորութիւն, նայի՛նք...

Ու ստութեան, զրպարտութեան, դաւադրութեան ծարաւէն բռնկած հոգիներ կը խուժեն՝ կօպիճներէն դուրս պոսթկացող ու հիւանդագիտօրէն բացուած աչքե- րու մէջ:

—Ի՞նչ կ'ըսէ կ'որ, նայի՛նք, դազէթան...

Ասիկա կը նշանակէ՝

—Կարգը որ՞ն է կ'ած է, նայի՛նք, մրտուելու, մետուելու, անարգուելու...

Ու գահունակութեան հեքեր, հրճուանքի գալարում- ներ, զառանցանքի ծամածոութիւններ, մօլեգնութեան խելայեղ աղաղակներ:

—Խաբբան... խաչագո՞ղը... մատնի՛չը...

Նայեցէ՛ք սա անասնացած խուժանին: Օ՛ր քօտմեծի տեսարանը: Ատելութեան ծարաւն է որ կ'արբենայ, կը կշտանայ, անյագ ու եղեմական ախորժակով մը:

Ու բերնէ բերան կը լղրճուի, կը պղծուի անունը մարդու մը, որ գրեթէ միշտ հանրութեան արժանաւոր ու անձնուէր աշխատաւոր մը կամ անուրանալի արժա-

նիք մը կը ներկայացնէ:

Եւ եթէ պատահի—օ՛ շատ քիչ անգամ—որ Դրու- թեան օտկանները նոր քօտութիւն մը չի կրնան պարու- նակել, նոր սուտ մը, նոր զրպարտութիւն մը, նոր վար- կաբեկում մը չի բերեն, այն ատեն կ'արժէ կանգ առնել ու պահ մը թելագրական ու անդիմադրելի յուսախաբու- թիւնն ու դժգոհութիւնը դիտել անոնց սովորական ըն- թերցողներուն: Կը տխրին, կը դառնանան, խեղճե՛րը, ու նեղօրրտ ձեւով մը թերթը մէկզի նետելով՝

—Չգէ՛, պէ ախպար, աս դազէթալին մէջն ալ բան մը չի կայ բերնի համով կարգալիք...

Ահաւոր չէ՞ այս հօգեկան վիճակը:

Բայց ինչ որ՝ քօտմեծիին սահմաններուն մէջ՝ մարդկային երեւակայութիւնը կ'անցնի, կը զահանդէ, ինչ որ մարդկային անարգութիւնը կրնայ արտագրել, վիժել ամենէն աւելի հրէշաւոր, ամենէն աւելի ահա- բեկող, ամենէն աւելի յուսահատեցուցիչ՝ սա հակա- մարդկային, սա ճիւղային անգիտակցութիւնն է, օրով Դը- րութեան վարձուած հայեր կարող կ'ըլլան կ'որ՝ ուրիշ հայերու դաւաճանութիւնը հաստատել յաւակնած առան- նին՝ յգանալու ու յաղթակեօրէն, շնականօրէն գրի առնելու եւ տպագրելու՝ ամէն ցածութիւն, ամէն մատ- նութիւն գերազանցող, նոսրացնող օրուր պէս անխո- տովանելի, ոճրագործ արհաւիրակից խօսքեր:

«Շատոնց ի վեր կ'աշխատէի հաստատել Այօնիչեա- նի մատնիչ մը ըլլալը... բայց կը ՅԱԻԻՄ որ դեռ նոր կարող կրցայ ըլլալ պէտք եղած փաստերը ձեռք ձգելու... հիմա ՈՒՐԱԻՍ ԵՄ ՈՐ ԲԱՂՁԱՆՔԻՍ ՀԱ- ՍԱՅ...»:

Ի՞նչ կ'ըսէք, գլխու պտոյտ չի՞ տար ձեզի աօիկա... հա՛յ մը որ ուրիշ հայ մը գաւաճան հաստատելով կ'եր- ջանկանայ...:



Մինչն ե՛րբ պիտի տեւէ այս խաղըութիւնը:

Պէ՛տք է ջախջախել, չքացնել այդ մահացու Դրու- թիւնը: Օր առա՛ջ, անմիջապէ՛ս: Բոլոր անկեղծ ու համոզուած յեղափոխականներուն, բոլոր պարկեշտ ու խղճի տէր հայերուն առաջին մտահոգութիւնը թո՛ղ ըլլայ աօիկա: Ո՛չ միայն օտարակազմական պարտականութիւն մը կատարած պիտի ըլլան ատով, ո՛չ միայն հանրային բա- րոյական առողջապահութեան հզօր ու փրկարար ճիգ մը ըրած, այլ նաև, այլ մանաւանդ ինքնապաշտպանութեան արգար ու վճռական միջոց մը ձեռք առած պիտի ըլլան, —օրովհետեւ բոլոր պարկեշտ ու արժանաւոր հայերը դատապարտուած են ո՛ւշ կամ կանուխ Դրութեան պղ- ժումին ենթարկուելու:

ԱՍՊՍՏԱԿՆԵՐԸ

ՄԻՆԱՍ ՕՂԼՈՒ

Է.

ՀԻՆ ՀՈՒՂԿԱՀԱՐՆԵՐԸ

Չաթախը օարօսփի մէջ էր: Էրիկ ժարդոց մեծ մասը Չէօլտիր լեռան արևմտեան լանջը ծածկող անտառներն էին փախած: Միայն ծերերը տուն մնացեր էին ու կիները՝ ահուզողի մատնուած՝ իրենց սեմերէն դուրս ոտք նետել չէին համարձակեր: Լօղմանը՝ Գիւլիկ Հասանի հետ՝ եկած, Գեազեա Տեփօյի տունը հիւր եղած էր: Իր խումբի ժարդիկը, որոնք տասնի չափ կային, գիւղին մէջ դռնէ դուռ կը վազէին հիմա քըֆ-րելով, ոտնալով:

— Ո՛ր է Մինասը, Մինասը, կը պոռչտային, եւ իրենց հրօցանի բուններովը այս կամ այն կողմ կը հըր-մըշարկէին այն երիտասարդները, որոնք յանկարծակիի եկած՝ իրենց շուարումին մէջ ժամանակ չէին ունեցած անտառը ապաստանելու: Գիւլիկոր ու անձայն, ձեռու-նին զօտիններուն մէջ խրած՝ անոնք թող կուտային որ այդ ֆէրմանը աւազակները հայհոյեն, օպառնան, բռնանան: Յաճախ կրկնուած ըլլալով այսպիսի դէպքեր, ժանտարմաներու, հրօսակներու անժամանակ այցելու-թիւններ, Չաթախցիներու համար ա՛լ սովորական բան մը դարձած էր աս, ու լաւ դիտէին, թէ գիւղին մէջ ո՛ր է պատիկ ընդդիմութեան փորձ կրնար աղէտաւոր ըլլալ ամբողջ այդ շրջանի գիւղերուն: Լուսիւնը, կրաւորա-կանութիւնը, համակերպութիւնը է՛ն կարճ ու է՛ն անփառ միջոցները նկատուած էին:

Այդ վայրագ անառակները, որոնք Մինասը հալա-ծելու եւ սպաննելու պաշտօնն էին ստանձնած, շատ անգամ խոյս կուտային Մինասի ճամբէն և՛ քանի որ զեռ ժամանակ ունէին՝ աւարառութեամբ կը զբաղէին, մա-նաւանդ որ ա՛լ զիրենց խանգարող մը չի կար, ոտի-կաններու ջակատները անոնց հետքին չէին ինկած ու հիմա Լօղմանի Աւազակխումբ անունը չէին կրեր:

Օր մը, մեծ կարաւան մը իր ամբողջ բեռներով կու-ղուպտիլէ յետոյ, ուղղակի Չարշամպայ, կառավարական շէնքին բակը վազեր էին և աղերոագրով մը փափաք յայտներ էին Մինասը իր խումբով ձերբակալելու: Գայ-մագամը, Պին Պաշին, Չափուը ուրախութեամբ ու եղ-բայրական ողջազուրանքի զրկընդխանութեանքով զանոնք

ընդուներ ու վերը, Սէրայն էին հրամցուցեր: Ու ա՛լ անցեալը մոռցուեր, գացեր էր: Լօղման ու Գիւլիկ Հասան՝ իրենց իսկ զարմացած այս անակնկալ ընդու-նելութենէն՝ քովտի ու նշանակալից ակնարկներ էին փոխանակեր, աւազակի անթարգմանելի լեզուն, որ ի-րենց միայն ծա՛րթ էր:

Կառավարական շէնքէն առօք փառօք դուրս գալեր-նէն վերջ, ա՛լ մէկը չեղաւ անոնց անցեալ շահատա-կութիւններուն հաշիւը պահանջող: Անոնք երէկի, ժամ մը առաջուան աւազակները չէին կարծես: Լօղման ու Հասան չափուցներ էին դարձած, եւ տեղւոյն գայմա-գամը անձամբ այդ երկու անօրէններուն մէջքին կապեր էր իրենց պաշտօնական սուրերը: Այդ օրէն սկօած՝ ա-նոնք Մինասի հալածողները, հայ ցիւղացիներու յայտ-նի պատուհասն եղեր էին: Թալան, կողոպուտ, բռնա-բարոյութեան ա՛լ վերջ չունէին ու թիւրք գիւղացիներն անգամ ազատ չէին այդ պաշտօնական աւազակներուն սարսափէն, անոնց աւերող ճանկերէն:

Այսօր իրենց շահատակութիւններուն կեդրոնը Չա-թախն էր: Ամէն դուռ կը բացուէր անոնց առջեւ: Գեազեա Տեփօյի տան բակը տարօրինակ տեսարան մը կը ներ-կայացնէր: Մէկ կողմէն թարմ վառելիներ ու գաճառիկներ կը մորթէին բարիպտուղ հիւրերուն կերակուր պատրաս-տելու, միւս կողմէն այդ պատուական հիւրերը՝ մէկ մէկ սօփա ձեռուներն՝ քանի մը հայ երիտասարդներ ծեծելու զբաղած էին: Կասկած կար թէ անոնք Մինասը փախցուցած էին Լօղմանին գիւղը մտնելէն առաջ:

Չոր աթարի կտորներ՝ թելերու ծայրը կապած՝ դէպի այդ երիտասարդներուն բերանը կը նետէին, հը-րամայելով անոնց այդ աղբի պատառը խածնել: անյա-ջող պարագային իրենց քով կեցող աւազակը հարուածը կիշեցնէր անոնց ծոճրակին:

Ներքը, Գեազեա Տեփօն բարև բռնած ու իր ծունկ-ուրներուն վրայ կծկտած նստած էր Լօղմանի գէմ: Գիւլիկ Հասանը իր նարկիլէյօփը զգլխած՝ մէկը միւսին ետէն օղիի գաւաթներ կը կոնծէր ու՝ կէս գինով ար-դէն՝ գաւառական խաղերու միօրինակ եղանակներ կը մզար անընդհատ քթին տակէն:

Յանկարծ դուրսը աղմուկ մը բարձրացաւ, ու Լօղ-ման ու Գիւլիկ Հասան, երկուքը մէկանց, դէպի դուռը վազեցին:

— Եկա՛ւ, եկա՛ւ սկօան պոռալ ամէն կողմէ, ուրա-խութեան աղաղակներով ողջունելով նորեկը:

Աչքը Համտին՝ սազը անթին տակ՝ կէս ժպտուն երեսով ներս մտաւ: Սենեակին վերի զուլեք, վառուղ օճախին քով, տեղ պատրաստուած էր անոր համար: Համտին Լօղմանի ու Գիւլիկ Հասանի անբաժան ընկերն էր եղած: Անոնց իբր աւազակ լեռներու մէջ թափառած ատեն ինքն ալ, իր սազով, անոնց հետեւած, անոնց ընկերացած էր: Երկար արշաւանքներէ վերջ,

հիբ անտառի խորերուն կամ քարայրներու մթին խոր-
 քերուն մէջ վառուող կրակին շուրջ բոլորած՝ իրենց
 հայտուտի կերակուրը կը պատրաստէին ու խորովածին
 հօտը անոնչ, անոնչ կը բուրէր, Համտին իր օազի
 թելերուն կը դպչէր ու այդ աւագակ դիցազներու շա-
 հատակութիւնները կը սկսեր զուրցել ու իրենց փառքին
 իսկ երգերովը կը հանդիպէր զանոնք: Թանձրաբար
 պուրակներու ծոցին մէջ իրենց բոյնը գրած՝ Համտի
 մեղեդիները կը ներշնչէին ու ա՛յլ աւելի յանգուզն ա-
 րարքներու կը մղէին զանոնք: Առանձնակեաց՝ այդ հայ-
 տուաներու աչքը անոնց անբաժան ընկերն էր նորէն
 հիմա, ու այս նոր շրջանին՝ որ գիւղն որ երթային՝ ա-
 նոր ներկայութիւնը անհրաժեշտ էր իրենց:

Կիւլիկ Հասանը անոր վիզը պլլուեցաւ, իսկ Լօղ-
 ման գոհունակութեան բարեւով մը զայն ընդունեց ու
 Գեանհեա Տեփօյին հրամայեց որ սեղանը պատրաստեն:

— Գեո կերակուրի չոկօած, Փառըլով մը, մեր ա-
 խորժակը պիտի բանառ, Համտի՛, ըսաւ Լօղման, աչը-
 գին զառնալով:

Համտին իր ճկուն մատներով քանի մը անգամ օա-
 զին թելերը զնկզնկացուց, ականջ գրաւ ու զանոնք
 կատարելագէտ ներդաշնակելէ վերջ, եռանգով ու յա-
 փըշտակութեամբ իր եղանակներուն անձնատուր եղաւ:

— Չալելէն առաջ պէտք է լաւ մը տաքնալ, ըսաւ
 Հասանը, մաստիքայով լեցուն գաւաթը Համտին եր-
 կընցնելով:

— Չայնը ա՛յն ատեն միայն անուշ կուգայ, երբ
 կոկորդը օղիով լուան, յարեց Լօղմանը:

— Կենացնո՛ւզ...
 — Կենանքդ աւելնա՛յ...

Քիչ մը վերջը, Աչք Համտին զիւ ձայնը կը լուռէր,
 իր օքանչելի ելեւէջներովը: Սազը անոր մօզական մատ-
 ներուն տակ կարծեօ լեզու առած՝ իր երկու հիւանդ լա-
 բերուն ցաւազին շղաձգութիւններուն մէջ կը զայրանար,
 կուլար, կը նուաղէր, կը գոտար, կը օպառէր, կը փո-
 թորկէր ու հրաշալի արուեստով ու յուզումով դիցազ-
 ներգութիւններ կ'իրագործէր: Աչք Համտին, կտրիճ-
 ներու շերմեանդ հիացողն էր, ի՛նչ ցեղէ ու կրօնքէ որ
 ալ ըլլային անոնք, ու նոյն իսկ փորձուեր էր վերջին
 ժամանակները Մինասին ու անոր խումբին վրայ երկար
 դիցազներգական տեստան մը հանել:

— Մինասն երգէ՛, Մինասն երգէ՛, Համտի՛, գօչեց
 անկարծ Հասան գաւաթը պարպելով:

Քաջբը իրարու պատմութիւնովը միշտ կը հե-
 տաքըքուին, ու նոյն իսկ իրենց սօսին քաջագործու-
 թիւններուն օտջե յափշտակութեամբ կանգ կ'առնեն
 երբեմն ու հիացումով կը լսեն: Կտրիճները իրարու
 յարգը գիտեն ու գիրար կը գնահատեն: Ու եղբայրական
 գորովով մը իրենց սիրաբը գէպի իրենց թշնամին կը
 վազէ: Իրենց համար հաւատարի մը, իրենցմէ քաջի

մը հետ կտուիլը փառք է:

Մինասը քաջ էր: Ո՛չ Լօղմանը եւ ոչ ալ Կիւլիկ
 Հասանը կ'ուրանային ատիկա, ու իրենց համար է՛ն
 հաճոյական բանն էր միշտ անոր վրայով լսելը:

— Մինասն երգէ՛, Մինասը, հրամայեց Լօղմանն ալ:
 Համտին նորէն իր օազին թելերուն դպաւ, տէթանի
 համար ներդաշնակեց զանոնք ու սկսաւ երգել:

Աչք Համտին համար վայրէ տղան էր Մինաս, որուն
 քարայծերը ծիծ տուած էին: Քաջորդիները անոր ական-
 ջին երգ երգած, արծիւն անոր օրօք կարգացած, իսկ
 հիւսիսի կատաղի քամին անոր որբանն օրօքած էր:
 Անոր մայրը էգ առիւծ մըն էր, որ իր կորիւնին լափ-
 լիզել սորվեցուցած էր միայն: Անտառին առտուածները
 անոր վրայ կը նախանձէին և հուրիները անոր կամար
 յօնքերէն ու նեախ նման վեր ցցուած պեխերէն կ'ախուիլ
 կը տենջային:

Մինասի գնդակները վերը, երկնքին մէջ ձուլուած
 էին: Անոնց իւրաքանչիւրին վրայ մա՛հ դրուուած էր ու
 վրիպիլը գոյութիւն չունէր անոնց համար: Այդ հօկային
 մարմինը անթափանց վերարկուով մը պատուած էր, զըն-
 դակները անոր ընդհարելով կը կակղանային, կը հա-
 լէին:

Գիւղի երիտասարդները կը օքանչանային անոր վրայ
 ու իրենց սիրաբը կ'ուռէր, երբ անոր կ'սիններուն վրա-
 յով կը լռէին, երբ անոր համբաւը թեւաւորուած կուզար
 գիւղէ գիւղ, հիւղակէ հիւղակ պտտելու:

Աղջիկները իրենց պարերգներուն և մեներգներուն
 մէջ զայն կ'երգէին, անհուն ու շերմեանդ սիրով մը
 խոտովուած ու ամէն անգամ որ լեռնորդիին գիւղէն անց-
 նելուն լուրը կ'առնէին՝ ճամբաներն եզերող խիտ առ
 խիտ անտառներուն մէջ կ'ծկտած՝ հրավառ ու տարփոտ
 նայուածքներով Մինասին ու իր ընկերներուն յաղթա-
 կան անցքին կը օպառէին:

Համտին ինքն ալ յափշտակուած էր երգած հերոսին
 համբաւէն, ժամանակ չունէր իր չորօղին նայելու, աչքերը
 գոց՝ ամբողջ էութեամբը իր օազին կպած ու անձնա-
 տուր կ'երգէր ու կ'երգէր:

Ամէն անգամ որ Համտին կանգ կ'առնէր Մինասի
 մէկ շահատակութեան վրայ, Լօղմանի ձեռքը իր հը-
 րացանին կ'երթար անզգալաբար ու ան իր առջեւ պատ-
 կերացող, ցցուող այդ ամեհի հակառակորդին հետ
 շափուելու կատաղութենէն կը զալարուէր: Ինքն ալ ժա-
 մանակ մը ասպատակեր, թալլեր, կողոպտեր էր ու
 հերոսանալու կամէութիւններ էր ունեցեր, բայց աւա-
 զակ անունէն գատ ուրիշ տիտղոսի չէր արժանացեր:
 Ամէն գիւղ, ամէն տուն իր վայրագութեան, իր նախ-
 ճիրին մէկ նշանը կը կրէր ու ամէն բերնէ անէձք ու նա-
 խատինք միայն կ'ընդունէր: Իր կենանքին ամենամեծ
 փառքը պիտի ըլլար այդ ժողովուրդի հերոսն ու ախօյ-
 եանը իր օտքերուն բերել, ստորնացնել ու անոր պլլուն

վրայ կօխելով իր մեծութիւնը հռչակել: Պաշտօնի գլուխ անցած օրէն ի վերի միակ նպատակն էր ատիկա: Բայց ձախող բաղդ մը կարծես կապուեր էր իր քայլերուն: Իր երազածին նման հանգիպում մը չէր ունեցած առ կաւին ու կը զգար թէ այդպիսի պատեհութիւն մը թեւ թեւ բնաւ պիտի չներկայանար, քանի որ գիւղական հասարակութիւնը իր ծոցին մէջ, իր սրտին վրայ կը պահէր Մինասը գուրգուրապէս:

Համտիին երգերը բոլորովին գրգռած էին Լօզմանը, ու հազիւ թէ աչքը իր վերջին տունը աւարտեր ու վերջին հարուածը տուեր էր իր սագին, երբ Մինասի ոտիւր՝ իր անկարող մոլեգնութենէն գրեթէ խենդեցած՝ իր վեցհարուածեանը զօրս քաշեց և մէկը միտին ետեւն անոր վեց աչքերն ալ զէպի առատաղը պարպեց: Մենեակը վառօղի ծուխով լեցուեցաւ և ծծումբի հեղցուցիչ հոտը կիւչիկ Հասանն անգամ նեղեց: Հասանը, որ իր օղիի շիշին կառչած և Մինասի քաջագործութեանց զիւցազներգութենէն արբշի՛ր՝ իր գոյութիւնն իսկ մոռցած էր, վեցհարուածեանին յաջորդական պայթումներէն վեր ցատկեց և կատղած արտայայտութեամբ մը իր չորս կողմը նայեցաւ: Իր մթնցած աչքերուն ընկաւ իր գործակից աւազակին զէմքը միայն որ խնդալէն ծամածամ էր: Հասան նորէն իր տեղը նստաւ և անուշ երազէ մը արթնցող մարդու մը պէս՝ աչքերը ամուր մը գոցեց՝ զայն կրկին շարունակելու ակնկալութեամբ:

Քեահեա Տեփօն այլայլած, գունաթափ, քարացած մեացած էր: Եթէ իր ամբողջ տունը կրակի տային այդ պահուն ձեռքէն բան մըն ալ չէր ի գար: Ի՛նչ պիտի կրնար ընել, եթէ այդ գնդակները՝ օղին մէջ պարպուելու տեղ՝ իր ու իրեններուն օրտին պարպուէին: Ոչինչ: Նոյնիսկ գիւղացիները յանցաւոր պիտի նկատուէին ու անոնցմէ քանի մը տասնեակներ բանտ պիտի առաջնորդուէին:

Ներս մտաւ Մօլլա Էմինը, իոնն հետ ընկեր ունենալով գիւղին քահանան, Տէր Պօղոսը: Եկած էին Լօզմանին ու Կիւչիկ հասանին բարի գալուտ մաղթելու: Երկուքն ալ իրենց սովորական բարեւները տրւին ու վերը՝ վառարանին զլուխը հրաւիրուեցան: Աւազակներու համար կրօնական խտրութիւնը շատ հազուադէպ բան մըն է, և յաճախ անոնք քրիստոնեայ կը դերներու աղօթքը կը փնտոնն և իրենց օտըն ու հրացանը բանի, սպառնալիցի տակ օրհնել կուտան: Տէր Պօղոսը քանի մը անգամներ, օրհնած էր այդ զոյգ մը շարագործներուն զէնքերը ու ասոր համար առատօրէն վարձատրուած էր անոնցմէ: Այս անգամ անոնք ալ հին աւազակները չէին, իրենց մէջքերը պաշտօնական սուրի փոկով գօտեպնդեր էին ու իրենց անունին տեղ տիտղոսներ կը կրէին: Չավուշ էին դարձեր: Պաշտօնը շփացուցեր էր զանոնք ու զէպի կղերը ունեցած յար-

գանքնին ալ պակօեր էր:

—Քիչ մը պարերգ երգէ՛, Համաթ՛, հրամայեց Լօզմանը:

—Պարերգն անհրաժեշտ է, կրկնեց Կիւչիկ Հասանը, կարմրած աչքերը սրբելով:

Ու երկու աւազակները իրենց գաւաթները վերցուցին ու ետե ետեի քանի մը անգամ պարպեցին:

Աչք Համտիին պուխն ալ տաքցած էր, ու պարերը սկսելէ առաջ իր ծունկերը ինքնաբերաբար արդէն սկսեր էին խաղալ:

Լօզմանը ոտքի ելաւ, ծոցէն թաշկինա՛ր գուրս քաշեց և յաջորդաբար Տէր Պօղոսի, Մօլլա Էմինի ու Քեահեա Տեփօսի թևերէն քաշելով ոտքի հանեց զանոնք պարելու համար:

Աւետարանի ու Ղօրանի պաշտօնեաները սահմարկած իրարու երեռ կը նայէին: Երկուքն ալ այդ անակնկալ պարի հրաւերէն վրդովուած էին: Առարկելու փորձեր ըրին, ընդդմիացան, բայց Կիւչիկ Հասան ալ Լօզմանի օգնութեան հառաւ ու զէնքը ձեռքին՝ զինուութենէն ոտքերուն վրայ դեղեւելով՝ սպասաց պարը կազմել ու պարել: Ճար չի կար:

—Որպէս զի ժամանակ մը Աւետարանն ու Ղօրանը մօտնան՝ օղի տուէ՛ք, հրամայեց Լօզմանը:

Քանի մը գաւաթներ ետե ետե պարպուեցան: Մօլլա Էմինը իր հաւատքին անպատուութիւն չբերելու համար՝ ճերմակ փաթթօցը քակեց: Ամէն անգամ որ ողկից ըմպելի գործածելու պէտքը զգար՝ իր քանի մը կանգուն ճերմակը կը ծալէր ու մէկ կողմ կը գնէր: Իր այդ գիտէն ինքն ալ գոհ էր:

Տէր Պօղոսը շատ ընդդիմացաւ պարելու: Քահանայ մը իր կեանքին մէջ երբէ՛ք այդպիսի քայլ մը չէր առած տակաւին: Ինքը, իր ալեւոր մօրուցով, իր երկար ու լայն վերարկուով ու եկեղեցական զլխարկով, բնաւ կամք չունէր հպասակելու: Օղիին համար սակայն առարկութիւն չունէր ընելիք: Ընդհակառակը՝ իր տերտերի փորը անով տաքցնելուն գոհ էր: Բայց պարելու օտպաւիլը է՛ն սոսկալի հարուածն էր, զոր իր զլխուն եկած ըլլար: Ու պահ մը վերջը, Լօզմանի զէնքը անոր ճակտին ուղղուած էր: Պէտք էր պարել: Ու պարեց:

Մօլլայ, քահանայ, աւազակ ու քեահեա իրենց խօշտակաւորներով ամբողջ շէնքը շարժելու վրայ էին, երբ յանկարծ տարօրինակ աղմուկ մը փրթաւ դուրսէն: Պարը ընդհատեցին ականջ տալու համար: Անվերջ խընդօղի ձայն մը բակը լեցուցած էր:

—Սրիկաները, իրենց ալ դուրսը կը պարեն, ըսաւ Լօզմանը, ու նորէն իր ձեռքը վեր վերցուց ու թաշկինակը փարտելով պարը շարունակեց:

Մէկէն, նետի պէս ներս նետուեցաւ Սողոմոնը: Ինչպէս հոտ ընկեր էր, ինքն ալ չէր գիտեր: Մէկ կողմը

արիւնով ներկուած էր ու ամբողջ մարմնովը թրջուած կը զողար ու կը զողար:

Գիւղէն ներս մտած պահուն՝ երախաներն ու շուները զայն նշմարեցին ու ետեւէն ինկեր:

— Խենթը, խենթը, կը պոռային ամէն կողմէ:

Տարու պատասխան չունէր: Խենթէ մըն ալ աւելի այլանդակ դրութեան մէջ կը գտնուէր: Ոտքերը բոգիկ, անվարտի, օրսփալով այս ու այն կողմ կը վազէր շու- ներու ահուայէն ու տղոց քարերէն ազատելու համար:

— Խենթը, խենթը, կը լսուէր ամէն կողմէ, ու

գիւղը մնացող բոլոր բնակիչները ոտքի էին ելեր: Այդ պիտի տարօրինակ երևոյթ մը առաջին անգամ էր որ իրենց գիւղը կ'այցելէր օր արևով, ու թէև Լօղմանի ու Կիւչիկ Հասանի ներկայութենէն սարսափակար՝ խըն- դալու այդ մէկհատիկ պատեհութիւնն ալ ձեռքէ հանել չէին ուզեր սակայն:

Ու Սողոմոն ահամայ խենթեցած՝ Գեազհեային տունը կը փնտռէր, որ այդ պահուն գիւղէն վերցուած էր կարծես: Հանգչելու, շունչ առնելու ժամանակ չէին ի տար իրեն: Մէկ աղբանոցէն միւսը կը ցատկեր, մէկ փողոցէն միւսը կը մխրճէր ու մրրկի նման ամէն կողմ աղմուկ մը կը ստեղծէր: Ամէն կողմէ իր վրայ կը պո- ռային, իր վրայ կը խնդային, գինքը կը հալածէին:

Քանի մը անգամ գիւղին մէջ խելայեղ պտոյաներ գործելէ վերջ, Գեազհեային դրան առջեւէն կ'անցնէր, երբ ներսէն եկող պարի ու երգի ձայներ իր վերաւոր ա- կանջին զարկին: Հո՛տ էին: Ուրիշ տեղ չէին կրնար ըլլալ: Ու Սողոմոն անմիջապէս բակին մեծ դռնէն ներս նետեց ինքզինքը ու անկից ալ ուղղակի ներքնասան- եակը վազեց, առանց վայրկեան մը խորհելու իր դու- թեան վրայ:

Իր յեղակարծ մուտքը պարը զագրեցուց առժամա- պէս: Ու Լօղման ու Կիւչիկ Հասան՝ երկուքը մէկ՝ այդ յանդուգն ու անկերպարան մարդուն առջեւ արն- կուեցան: Ապշեցան: Սողոմոնն էր, Գափու-Գաեաի Քզիրը:

— Քզիր, բացագանչեց Լօղմանը:

— Սողոմոն, յարեց Կիւչիկ Հասանը:

Ու երկու աւազակները իրարու աչք ըրին: Սողոմոնի այդ վիճակին մանրամասնութեանը մտնելէ առաջ, եր- կուքն ալ զայն պարին միացնելու օրոշումը տուին, ու անոր թեւէն բռնելով՝ ձեռքը քահանային երկնցուցին, որ գունատեղ մնացեր էր: Մատնիչին ներկայութիւնը՝ այդ տարօրինակ կերպարանքին տակ մանուաճի՝ բարի նշան մը չէր:

— Պարե՛նք, պարե՛նք, գոչեց Կիւչիկ Հասանը:

— Մօլլա, քահանայ ու Քզիր, լա՛ւ հանդիպում, այն- պէս չէ, հաբցուց ինքնիրեն Լօղմանը:

— Կարճոր լուր ունիմ, կմկմաց Սողոմոնը, հազիւ

լսելի ձայնով մը:

— Պարե՛նք, պարե՛նք, պարե՛նք, կրկնեց Հասանը:

— Լուր ունիմ...

— Պարը խանգարել շյանդգնիս հա՛, գոռաց Լօղ- ման:

Ու ցատկոտուքը նորէն սկսաւ: Սողոմոն՝ ջախ- ջախուած, գրեթէ կիսամեռ՝ Հասանի թեւէն կախուած կը քաշկոտուէր:

Ատի՛թ մը գտնելով, անոր ահանջն ի վար՝

— Մինա՛սը, Մինա՛սը, փսփօաց:

— Ի՛նչ Մինաս, զարմացած անոր դէմքին նայեցաւ աւազակը:

— Մինասը Տօմպալախենց տան քովը ուրախու- թիւն կ'ընէ կոր:

Սողոմոնի այդ խօսքը յանկարծ օթփեցուց Հա- սանը: Լօղմանի վազեց ու եղելութիւնը հաղորդեց անոր:

— Մինա՛սը... ուրախութիւն, բացագանչեց Լօղմանը, կարծես իրենցմէ զատ ո՛ր է մէկը ուրախանալու իրա- տունք չունենար:

— Ձէնքերը առէ՛ք, պատրաստուեցէ՛ք: պոռաց Լօղ- ման, Մինասը ձեռքերնուս մէջն է, շո՛ւտ, դէպի գետին միւս եզերքը...

— Սեղանը պատրաստ է, Չավուշ էֆէնտի, մէջ մտաւ Գեազհեա Տեփօն:

Սեղանը պատրաստ ալ կը մնայ, մինչեւ որ մենք Մինասին դիակը ոտքերէն քաշկոտելով հօս կը բերենք ու գինիի տեղ իրեն արիւնը կը խմենք...

Քանի մը վայրկեանէն ոտտիկան ու չավուշներ կազմ ու պատրաստ էին:

Ու երբ անոնք վերջնապէս գիւղէն հեռացան՝ Գեազհեա Տեփօն, մօրուքը ձեռքը՝


— Մինասի իւղոտ գնդակի՛ն հանդիպիք, մաղթեց:

— Ամենքդ ալ շան սատա՛կ ըլլաք, Աստուծոյ կրա- կի՛ն հանդիպիք... Տէ՛ր, Մինասի թևերը զօրացուր, ա- նիծեց ու աղօթեց Տէր Պօղոսը, աչքերն ու ձեռքերը եր- կինք վերցնելով...

(Շարունակելի)



ՔՆԻՒՐՔԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՄԸ



Նոր կեանքի նախնութեան թուոյն մէջ, խօսելով եւրոպական մտածելին ու ժողովուրդին դէպի հայկական հարցը ցոյց տուած ոգեւորութեան մասին, ու մատնանիչ ընելով դիւանագիտական, քաղաքագիտական նորագոյն շարժումները, անմիջապէս կը փութայինք աւելցնել, թէ հայ ժողովուրդը առաջնորդողներուն զխաւոր պարտականութիւններէն մէկն ըլլալու է զանի զգուշացնել լոկ յոյսով բաւականանալու ազգասպան տրամադրութիւններէ:

Որքան ալ դառն ըլլայ մեր ունեցած նորագոյն պատրանքը, մեզ համար խարուած չեն համարուիր այն հայերը, որոնք կ'ուզեն յոյս մը գնել Պրանսայի վրայ՝ որուն Արևելքի մէջ ունեցած նիւթական և բարոյական շահերը երբէք չեն հակառակիր մերիններուն:

Չարաչար կը խտրուին միայն անոնք, որ աղէտներուն առջեւ ամէն արիւթիւն կորսնցուցած, ձախորդութիւններէն շուարած, մեծ ու պզտիկ ո՛ր եւ է դժուարութեան կուրծք տալու անկարող՝ փրկութեան դիւրին ու միակ ճամբան դիւանագիտութեան մէջ փնտռելու վարպետութիւնը կ'ուզեն պահել միշտ, մոռնալով կամ բնաւ չյիշելով որ հայկական դատին համար մեր կողմէն ո՛ր և է յուսահատ անշարժութիւն, ո՛ր և է յեղափոխական դատաւարութիւն արհամարհանքի միայն կ'արժանացնէ մեր ցեղը աշխարհի այլին:

Անցեալին մէջ Պ. Հանթըրի արևելեան քաղաքականութիւնը եթէ փաստակար զարձաւ հայերու, երբէք օգուտ մը չունեցաւ նոյն ատեն Ֆրանսական ազգեցութիւնը վերականգնելու, բարձրացնելու տեսակէտով: Ընդհակառակը, աղիտարբ հետեւանքներ իսկ արտադրեց, երբ անուղղակի կերպով թոյլ տուած եղաւ որ Գերմանիան իր բարոյական ազգեցութիւնը հզօրացնէ և նիւթական նորանոր շահեր ապահովէ՝ կամաց կամաց երկրի անտեսական բոլոր ուժին տէրը դառնալով:

Պ. Տէլքասէ չուզեց ու չէր կրնար նոյն ձախող ճամբան շարունակել: Տաճկաստանի բոլոր քրիստոնեաներուն, ու մասնաւորապէս հայերու վիճակին բարւոքութիւնը համաձայն է Ֆրանսական ամէն տեսակ արևելեան շահերուն: Ո՛չ մէկ ցեղ՝ թիւրքերոյ մէջ՝ մենէ աւելի սիրած է Պրանսան, անոր լեզուն, անոր գրականութիւնը, անոր գիտութեան ու կրթութեան բոլոր հեղինակները: Հետեւաբար, մենք՝ հայերո՛ւ եղած ենք ու կրնանք ըլլալ ամենէն յարմար ու ամենէն լաւ միջնորդը, որ Ֆրանսական ազգեցութիւնը տարածած է ու պիտի տարածէ հոն ամէն կերպով:

Ուրեմն՝ եթէ գոյութիւն իսկ ունեցած չըլլային այն դաշնագրութիւնները, որոնց տակ Պրանսան ալ օտորագրած է, և իր կարգին պատասխանատու կը մնայ հայերու հանդէպ, բո՛ւն իսկ զուտ Ֆրանսական շահերը կը պահանջեն հայապաշտպան քաղաքականութեան մը հետեւի Արևելքի մէջ:

Այս ճշմարտութիւնը չէ մօտցուած, ու չա՛հա, քանի մը տարիներէ ի վեր, Հանթըրի դէմ ընդհանուր դժգոհութենէ մը յետոյ, Պրանսայի բոլոր կուսակցութեանց ներկայացուցիչները ամէն ճիգ ընելու վրայ են անցնելու սխալները դարմանելու՝ Ֆրանսական ազգեցութիւնը վերօտին բարձրացնելու մտահոգութեամբ:

Պրանսո-թիւրք վէճը տեսնող որ վերջ գտաւ այնպիսի համաձայնութեամբ մը որուն մէջ, հակառակ մեծամեծ աղմուկներուն, ակնարկութիւն մը իսկ չէր եղած մեր ջարդերուն շուրջը ու մեր դատին համար, զոր ձեռք առնելով միայն Պրանսոս աւելի ճշմարտապէս մտածած պիտի ըլլար իր բարոյական շահերը պաշտպանելու եւ Ֆրանսական ազգեցութիւնը բարձրացնելու տեսակէտով:

Նայեմք Աի երեսփոխանական ժողովին մէջ, իրաւ է թէ Մասոն Սեմպա և Տընիս Քօշէն՝ հայկական խնդրին վրայ իրենց հարցապնդումներու միջոցին խօսիւ ըննադատեցին կառավարութեան ընթացքը և իրենց բոլոր օւժովը պնդեցին, թէ Պրանսայի համար գործելու միակ պատճառը որ կար, հայերու պաշտպանութիւնն էր: Աւ Տէլքասէ յայտարարեց թէ Հանրապետութեան կառավարութիւնը իր ձայնը պիտի բարձրացնէ միշտ որպէս զի հանդիսաւոր դաշնագրութիւնները վերջապէս նկատողութեան առնուին:

Բայց այս ամենուն արդիւնքը: Մեզի համար տխուր է հաստատել, թէ դժբաղաբար քաղաքական դժուարութիւնները դեռ չեն հարթուած մեր խնդրին առջեւ, և Ֆրանսական Հանրապետութիւնը՝ իր բաժինը լայնօրէն կատարելու պատրաստ ըլլալով հանդերձ, անկարող կը զգայ ինքզինքը առանձին գործադրել տալ տրուած խոստումներն ու դաշնագրութիւններով վաւերացուած յանձնառութիւնները:

Պ. Տէլքասէի այս պարզ ու անկեղծ խոստովանութիւնը օակայն, մեզի համար ո՛չ փաստակար է, ո՛չ ալ յուսահատեցուցիչ:

Ո՛ր և է կառավարութեան կողմէ արուած նենգաւոր ու թեթեւամիտ խոստումներէն է որ վախնալու ենք: Ամենէն աղէտաւոր թշնամութիւնը գործած կ'ըլլան անոնք, որ անօհման յոյսերով կը լեցնեն մեզ, ուժ կուտան մեր ձգտումներուն ու յետոյ՝ վճռական ընկերի՝ փոխանակ գործելու, փոխանակ իրենց բոլոր աջակցութիւնը մեզի տրամադրելու, վատութիւնը կ'ունենան միօ միտակ թողլու մեզ մեր զօհերուն արիւնին մէջ:

Պրանսական նշանաւոր գործիչներու կողմէն մեր

գատին համար ցոյց տրուած անվերջ համակրութիւնը և արտաքին գործոց նախարարին մեր գատին ի նպատակ միւս պետութեանց հետ բոլոր ուժով գործելու անվերապահ պատրաստակամութիւնը կրնան մեզ իրաւունք տալ յուսալու, թէ Ֆրանսան մեր բարեկամ պաշտպանը պիտի ըլլայ, եթէ առիթը ներկայանայ և եթէ մենք գիտնանք ապացոյցը տալու, թէ վհատող, յեղափոխութիւնը լքանող եւ առով իսկ ամենուն զգուանքը մեր վրայ հրաւիրող ժողովուրդը մը չենք եւ, ընդհակառակը, պատրաստ ենք յամառօրէն, անդրդուելիօրէն շարունակել մեր հաւաքական ճիգն ու զոհողութիւնները՝ հաւատքով ու վստահաբար դիմելով միշտ դէպի միեւնոյն նպատակը, զէպի իրականացումը մեր կազմուրիչ յոյսերուն:

Առ այժմ ֆրանսական կառավարութեան հայոց համար գործել տալու միակ խոչընդոտ մը կայ, կ'ըսէ Մարտի Սեմպա, — միւս պետութիւններու «համաձայնութեան» պարագան: Ու ահաւասիկ մտածել տուող բուն խնդիրը:

Տաճիկ Սուլթանները դարերէ ի վեր ըմբոսած են, թէ ինչ կը նշանակէ քրիստոնեայ պետութեանց «համաձայնութիւն»ը:

Ես վուր Սէլիմի օրով, մազ մնաց որ քրիստոնէութիւնը յաղթանակ տանէր իսլամութեան վրայ: Լէոն Ժ. Պապը համաձայնութիւն գոյացուցեր էր բոլոր քրիստոնեայ թագաւորներուն մէջ: Մարտ 31ի թափօրը Կարտինաներուն սիրտը թունդ հանեց, ամենքը կը յուսային, թէ Պոլսոյ զահը պիտի տապալի, բայց պետութեանց մէջ «անհամաձայնութիւն»ը քանդեց Հոսի ուղղափառներուն վարպագոյն յոյսերը:

Սէլիմի յաջօրը՝ Սուլէյման Գանունը՝ շատ մը նուաճումներ ծրագրեց եւ իր յաջողութեան միակ պայման նկատեց քրիստոնեայ պետութիւններուն մէջ գժտութեան եւ մրցումի առիթներ հնարել, որպէս զի բնաւ չի կարողանան անոնք միանալ իրեն դէմ:

Քաղաքական այս նուրբ ծրագիրը Սուլէյմանի յաջողներուն համար զեկավարող սկզբունք մը եղաւ: Սուլթան Համիտն ալ չէ ուրացած իր նախորդներուն այս յաղթական զէնքը: Ու մինչեւ իսկ աւելի նրբացուցած, աւելի դարգացուցած ըլլալու յաւակնութիւններ կը փորձէ ունենալ. բայց չի կրցու երբէք նոր կասեքիտք մը ըլլալ: Եւ իր բոլոր մաքիավելութիւնները ծառայեցին ու կը ծառայեն երկրին առտիճանաբար քայքայումը, անտեսական անխուսափելի կործանումը մօտեցնելու:

Եւրոպական պետութիւնները՝ որոնք մինչեւ հիմա իրենց «անհամաձայնութեամբ» կարմիր հրէշին մեղօակիցը մնացին, որոնք իրենց անարգ նպատակներով ու ցած խարդաւանանքներով հայկական զարհուրելի կոտորածները թոյլատրեցին, ատոնք օակայն՝ զանազան

դաշնագրերով եւ բարենորոգման ծրագիրներով խոստացած են մեզի գարձնել մեր մարդկային այն ամենատարբական իրաւունքները, որոնց զլացումը կեանքը անտանելի կ'ընէ հայերու համար:

Այդ պետութիւնները պարտական են մեզի իւր մենք՝ առանց տարապայման յոյսեր զնելու քաղաքականութեան ու դիւանագիտութեան վրայ, եւ առանց վայրկեան մը իսկ մեր Նպատակին յեղափոխական ճամբան լքանելու, ամէն անգամ որ առիթ մը կը ներկայանայ, իրաւունք ունին իսկ պարտականութիւն ունինք մեր պահանջող ձայնը բարձրացնելու եւ մեր բողոքներով ու զիտակից գործերով յիշեցնելու անոնց, թէ մեր իրաւունքներու բռնաբարման, եւ իրենց պատասխանատու մեղօակցութեան անվերջ շարունակութիւնը՝ մնայուն վտանգ մը, անկասելի սպառնալիք մը պիտի ըլլայ խաղաղութեան ու արեւելեան քաղաքակրթութեան դէմ, միշտ պիտի վրդովէ մարդկութեան խղճմտանքը, ու միշտ անշնչելի ամօթը պիտի մնայ, խորանուած բոյօր պետութիւններուն ճակատին, եթէ տակաին յամառին անգնք ուրանալ իրենց պարտքը, իրենց հանդիսաւոր խոստումները:

Մեր գատին բարեկամ ֆրանսացի կարեւոր անձնաւորութիւններ որոշած են պնդել իրենց կառավարութեան մօտ, որպէս զի Հայոց խնդիրը ձեռք անէ՝ համաձայնութեան մը գալով միւս պետութեանց հետ: Երեօփոխանական ժողովի մօտակայ մէկ նիստին մէջ՝ Պ.Պ.Սենպա, Տըն իօ Քօշէն և Տ'էօթուրնէլ՝ հայկական հարցի մասին պիտի ներկայացնեն օրակարգ մը, միևնոյն նպատակով եւ միեւնոյն բառերով:

Այս առթիւ Հնչակեան կուսակցութիւնը Ֆրանսայի բոլոր երեօփոխաններուն ուղղած է մասնաւոր շրջաբերական մը, զոր թարգմանաբար կը ներկայացնենք մեր ընթերցողներուն՝ Նոր կեանքի ներկայ թուով:



Եւրոպական մասուլին հրատարակութեանց նայելով, Ռուսիան այս անգամ ալ չկամութիւն ցոյց տուած է զէպի հայկական խնդիրը, եւ նոյն իսկ բոլոր ուժովը միջամտած է որպէս զի ֆրանսական կառավարութիւնը Հայաստանի բարենորոգումներու դործադրութեանց մասին ո՛ր է կ պահանջում չներկայացնէ Սուլթանին:

Թայմզէն առնելով, Նոր կեանքի այս թուոյն մէջ մեր հրատարակած «Ռուսիա և Հայաստան» վերնագրով յօդուածը յօտակօրէն կը բացատրէ, թէ ինչ նպատակով Ռուսիա կը հակառակի յուզել այս վայրկեանիս հայկական խնդիրը:

40,000էն աւելի հայ դաղթականներ կան, որոնց կ'առաջարկէ այսօր ընդունիլ Ռուսահպատակութիւնը, ուրանալ իրենց հայրենիքը եւ շէնցնել անմշակ հողերը Անդրկովկասի՝ ուր օուսաց տիրապետութիւնը հաստա

տելու գործին մէջ ամենաեռանդուն դերը կատարած են հայերը:

Այսպէս ուրեմն մեր զարհուրելի թշուառութիւնը շահագործութեան անսպաս աղբիւր կը նկատեն զարձեալ: Բայց ասիկա նոր չէ որ պիտի հասկնանք: Ո՛չ ալ Ռուսիոյ այդ հողային ծրագիրը նորութիւն մը կրնայ համարուիլ:

1724 նոյեմբեր 10ին, Մեծն Պետրոս հրովարտակով մը՝ հայերը իր հովանաւորութեան տակ առաւ և գաղտնի հրահանգներ տուաւ իր պաշտօնեաներուն որպէս զի համոզեն հայ ժողովուրդը թողուլ իրենց հայրենիքը և գաղթել Կասպից Ծովուն եզերքները:

Ռուսական կառավարութիւնը այն ժամանակ առեւելայն կը ջանար հաւատարմել, թէ իր նպատակն է հայերը թրքական բարբարոտութենէն ազատել, մանաւանդ որ չպիտի կրնար պաշտպանել զանոնք, եթէ իրենց հայրենիքը մնային, քանի որ Բ. Գրան հետ զաշնագրութիւն մը կնքուած էր:

Միւս կողմէն սակայն հրաման տուած էր նոյն ծովեզերքի կառավարիչ ժէնէրալ Մատիշզինին, որ կարելի եղածին չափ աննկատելի ու հանդարտ կերպով մաքրէ, ոչնչացնէ իշլամները, եւ անոնց տեղ ընդունի հայ գաղթականներ: Մէկ քարով երկու ճնճուղ զարնել էր Ռուսին նպատակը:

Նոյն ծրագիրը՝ գուցէ աւելի վատ դիտոււմով մը, կ'ուզուի հիմա գործադրութեան դնել:

Ֆրանսական դեօպաններուն ուղղած մեր շրջաբերականով բացատրած ենք արդէն, թէ ի՞նչ է մեր պահանջը եւ թէ ի՞նչ կըսպասենք մենք Ֆրանսայէն, Ռուսիայէն ու ամբողջ Եւրոպայէն: Եւ մեր բողոքները, մեր ինքնապաշտպանութեան բոլոր միջոցները երբէք չեն կրնար դադարիլ մինչեւ որ վերջ մը չարուի մեր հսկայ տառապանքին, մինչեւ որ չի յարգուին մեզ արուած պետական խոստումները:



Թիւրքիոյ չորս կողմերէն հասած նորագոյն լուրերը նորէն կ'ապացուցանեն այն յաւիտենական ճշմարտութիւնը, թէ երկիրը անանկանալու վրայ է եւ Հայոց վիճակը՝ աւելի քան երբէք անհանգուրծելի:

Քիւչիկ Սայիտ փաշա, տաճիկներուն կարծեցեալ բարենորոգիչը, սահմակող անտարանի մը դէմ կը զրաւուեր վերջերս:

Բազմաթիւ թիւրք կնիկներ, որոնք պատերազմի մէջ մեռած իրենց այրերուն ու զուակներուն համար կառավարական գանձէն ողորմելի թնշակ մը պէտք է օտանային, երկար ատեն անվճար ու անօթի մնալէ յետոյ, վերջապէս հաւաքաբար կ'երթան, կը խոնուին Պապը Ալիին ժող և յուսահատական վայնասուններով իրենց տրտունջն ու ընդհանուր դժգոհութիւնը կը յայտնեն:

Քիւչիկ Սայիտի թիկնապահը հազիւ կը յաջողի ցրուել զանոնք, սպասնալով թէ ամենուն ալ թողակը պիտի ջնջուի, եթէ շարունակեն իրենց պողտուքները: Եթե՞ կնիկները ձեռնունայն, «յետս ընդ կրուկն» կը զանան իրենց անօթութեան հետ հաշտուիլ նորէն:

Մէքքէի պահակ զինուորներն ալ չեն կրնար ալեւատանց հացի համբերել ու ծառայել, և միևնոյն անօթութեան պատճառէն մղուած կ'ապստամբին մէկէն, որուն վրայ՝ օուլթանի կառավարութիւնը հազիւ կը ճարտարօրի քանի մը սսիկ հասցնել, ու ահա Շնորհիւ Վեհափառին խաղաղութիւնը կը թագաւորէ վերստին:

Սուլթանի զօրքերը, զինուորները, պաշտօնեաները, ամենքը անօթի են: Գրամ պէտք է: Ուսկից զանել: Թող հայերը մտածեն:

Երկրի մեր մէկ թղթակիցը, իր վերջին նամակին մէջ կը նկարագրէր մեզ այն դիւային վայրագութիւնները որոնք ի գործ կը դրուին թիւրք պաշտօնեաներու կողմէն հարկեր հաւաքելու պատրուակով: Հետեւեալ մէկ քանի տողերը նոյնութեամբ կարտապայենք հոս:

«Չարշամպայի գիւղերը՝ Գարոս-Գանա, Գուպա-«Ճիվիզ, Մարթիլ, Էյրիտերէ, Ուլա-րուանար, Կեօվձէ «քեօյ, Աղձա-Կիշէ, Թէքիար, Կայն, զրեթէ աւերակ «գարձուցին ու հիմակ ալ սկսած են քաղաքներու մէջ «իրենց դժոխային անխղճութիւնը գործադրել: Առանց «նկատողութեան առնելու անհատին նիւթական վիճակը, «ու յաճախ ծայրայեղ աղքատութիւնը, ըստ հաճոյս «գումարներ կը պահանջեն, զորս անկարելի կըլլայ վճա- «րել: Ու ահա ծեծ, անարգանք, եւ յետոյ՝ բանտ, ուր «խեղճ հայեր կը մեան անորոշ օրերով, եւ աօզին՝ ի- «րենց ընտանիքն ու զուակները կը տանջուին անօթի «ու լքուած բոլորովին: Ալ կարելի չէ տանիլ այս կեանքը: «Այժմ տեղւոյս բանտը լեցուն է այս կարգի հայ թըշ- «ուաններով:»

ՖՐԱՆՍԱՅԻ ԵՐԵՍՓՈՒԱՆՆԵՐՈՒՆ

Պ. Պ. Կարառուսեցի, Տընիս Բօշկէի և Մարտի Սեւպայի Հայաստանի մասին՝ անգամ մըն ալ Ֆրանսական կառավարութեանը հարցապնդելու որոշումիւ վրայ՝ Հնչակեան կոստակցութեան կեդրոնական վարչութեանը հետեւեալ շրջաբերական-ձևակեր ուղղած է բոլոր ֆրանսացի երեսփոխաններուն:

Պարոն Երեսփոխան, Նոյեմբեր 4ի նիւտին, ֆրանսական Խորհրդարանը Լոտմուս և Թիւպիէի խնդրոյն մասին Արտաքին Գործոց Նախարարին բացատրութիւնները ընդմիջեց միակամուտ աղաղակով մը. «Հապա Հայաստանը»:

Ֆրանսական ժողովուրդին ներկայացուցիչները ա-
տով կ'արտայայտէին իրենց փափաքը—որ փափաքն է
թրքական գարշիլի բէժիմին բոլոր զոհերուն—տեօնելու
որ Ֆրանքո-թիւրք վէճը՝ թիչ կարեւոր պատճառէ մը
ծնած՝ ընդլայնէր ու լուծուի յառաջ բերէր բարենու-
բողութեանց հարցին, բարենորոգութիւններ, զորս Եւրո-
պան, Պերլինի Համաժողովին մէջ, հարկաւոր դատեց
մասնել թիւրքիոյ հայաբնակ գաւառներուն մէջ:

Ֆրանսական Խորհրդարանին զիրքը շան ազնիւ
եղաւ, ու տրամաբանական: 1893ի հրէշաւոր շար-
գերուն ատեն Ֆրանսական զիւանագիտութեան ցոյց
տուած անշարժութեան հետեանքով էր միայն որ Ֆրան-
սայի հմայքը սոճունեցաւ Արեւելքի մէջ. անիկա պիտի
վերականգնի միայն այն օրը, ուր Ֆրանսան՝ Պ. Տը-
նիս Բոշէնի յաջող բացատրութեան համեմատ՝ «Սուլ-
թանէն հաշի պիտի պահանջէ, ո՛չ թէ միայն Պոլսոյ
քաղաքներուն շինութեան մասին, այլ աւելի՛ հայ արիւ-
նին, օրով անոնք օղողուեցան:»

Ուրախ եղանք իմանալով որ Պ. Պ. տ'Էթուանէ
ալը Բոնօթան, Տընիս Բոշէն եւ Մառսէ Սեմպա որո-
շած են անգամ մը եւս հարցապնդել Ֆրանսական կա-
ռավարութիւնը այն միջոցներուն վրայ զորս ձեռք ա-
ռած է կամ կը մտադրէ առնել, հարկադրելու համար
Սուլթանը գործադրել Պերլինի դաշնագրութեան այն
յօդուածները, որոնք Հայաստան մտցուելիք բարե-
նորոգութեան կը վերաբերին: Ապահով ենք որ Ֆրան-
սական Խորհրդարանը ամբողջովին պիտի միաբանի
հարցապնդողներուն, հրաւիրելու համար կառավարու-
թիւնը այս ուղղութեամբ գործելու:

Նոյեմբեր 4ին, Պ. Տէլքասէ յայտարարեց, Պ. Պ.
Մառսէ Սեմպայի եւ Տընիս Բոշէնի տուած իր պատաս-
խանին մէջ, թէ մինչեւ հիմա իր բոլոր կրօնաւոր ըրած
էր թիւրքիոյ Հայոց տառապանքները ամբողջով համար
կը խոստովանինք, անշուշտ, բարեկամեցողութիւնը, զոր
Պ. Տէլքասէ մէկէ աւելի անգամներ ցոյց տուած է կո-
տորածներ գաղտնիքով տալու կամ անսնց առաջն առ-
նելու համար: Բայց Պ. Տէլքասէ պէտք չէր եզրակա-
ցնել աակից, թէ Ֆրանսական կառավարութիւնը հայ
ժողովուրդին հանդէպ իր ամբողջ պարտականութիւնը
կատարած է: Այս մասնակի միջոցները առժամանակ-
եայ ամօքիչ մըն են միայն խորունկ ու վտանգաւոր
ցաւին զոր Եւրոպան արմատէն պարտի ջնջել: Եթէ
կ'ուզէ յարգել Պերլինի Համաժողովին մէջ հանդիսաւո-
րապէս առած իր յանձնառութիւնները: Զարդերու դա-
դարու մը լուծում մը չէ: Այն շրջաններուն, ուր հա-
մախումբ կոտորածներու դրութիւնը զանց կ'ըլլուի,
Սուլթանը կը շարունակէ բնաջինջ ընել հայ ժողովուրդը
աւելի խօսք, աւելի խորհրդապահ, բայց միշտ ապահո-
վաբար կործանիչ միջոցներով: Հայերուն զէմ մղուած
անգաղութիւն, օրով մեծութիւն հալածանք մը կ'արդիւնէ անոնց

ամէն նիւթական ու բարոյական զարդացում: Ո՛չ մէկ
հայ կը վայելէ իր կեանքին, ինչքին և ընտանեկան
պատուոյն ապահովութիւնը:

Եւրոպան, Պերլինի Համաժողովին մէջ, թիւրքիոյ
հայաբնակ գաւառները մտցուելիք բարենորոգութեանց
հարկաւորութիւնը ընդունեց, ազատելու համար հայերը
գերիի վիճակէն, ուր իշխմական բարբարոսութիւնը կը
պահէ զիրենք: Այդ թուականէն ի վեր ո՛չ մէկ բարե-
նորոգութիւն գործադրուեցաւ. ընդհակառակը, Սուլթանը
բազմապատկեց հալածանքները հայոց զէմ. առանց բո-
ղոքեցին Դրան, Եւրոպային, բարենորոգութեանց գոր-
ծադրութիւնը պահանջեցին քանիցս խաղաղական դի-
մումներով: Ետ մղուած թիւրք կառավարութեանէն, լրջ-
ուած Եւրոպայէն՝ ինքզինքնին բնականաբար բռնադատ-
ուած տեօնս իրենց իրաւունքները յեղափոխական գոր-
ծողութեամբ մը պաշտպանելու: Այս արդար ինքնապաշտ-
պանութեան գործին Սուլթանը պատասխանեց կազմա-
կերպուած շարդերու այն ահաւոր շարքովը որ արդի
ժամանակներու պատմութեան գերագոյն ամօթը կը կազմէ:
95ի և 96ի այս մեծ կոտորածները տիեզերական կար-
ծիքը յուզեցին. 1893 մայիս 11ին, Ֆրանսա, Անգլիա
և Ռուսիա Դրան ներկայացուցին մէմորանտոմ մը, ուր
կը ճշդէին այն բարեկարգութիւնները որոնք անհրաժեշտ
էր որ մտցուէին Հայաստանի մէջ: Սուլթանը օտա-
րագրեց բարեկարգութեանց այդ ծրագիրը եւ զայն գոր-
ծադրեց... շարդերը շարունակելով: Եւրոպան ձգեց որ
ընէ, վատութեամբ մը, որուն ատանկ դիրքի մը ան-
խելքութիւնը միայն կը հաւատարի: Ասիկա Սուլթանին
մտածել տուաւ թէ եւրոպական քաղաքակրթութիւնը
պարապ բառ մըն էր լոկ, թէ՛ եւրոպական քոնսերը
կատակ մըն էր միայն, թէ Պերլինի դաշնագրութիւնը
ծիծաղելի բաշավրա մըն էր պարզապէս, և շարունակե-
լով հանդերձ վայրագ ըլլալ իր արինախանձ քմահա-
ճոյքին ձգուած հայերուն՝ սկսաւ լիբբ ըլլալ Եւրոպայի
նկատմամբ. սուլթանին հետ ամենամանջան խնդիրներու
կարգադրութեանը համար իւրաքանչիւր պետութիւն ինք-
զինքը ստիպուած կը գտնէ հիմա նաւային ցոյցեր ընելու:

Պ. Տէլքասէ յայտարարեց թէ Ֆրանսան Պերլինի
դաշնագրութեան միակ ստորագրողը չըլլալով՝ չի կրնար
միտ մինակ կնճոտութիւններով լեցուն հարցի մը լու-
ծումը փորձել, բայց թէ ան լայն բաժին մը պիտի ստանձնէր
այդ նպատակով եղած գործողութեան մը մէջ, եթէ
Պերլինի դաշնագրութիւնը ստորագրող բոլոր պետութիւն-
ները ատոր ձեռնարկելու համար համաձայնէին:

Կը կարծենք—ու թաշակութիւններու ու մեծ Յե-
ղափոխութեան Ֆրանսային համար մեր ունեցած սիրալիր
օքանչացումը կ'ամրապնդէ մեզ մեր հաւատքին մէջ—որ
Ֆրանսան պիտի կրնայ՝ Ռուսիոյ հետ համաձայն՝ Պերլինի
դաշնագրութիւնը ստորագրող բոլոր պետութիւնն րուն
կույ մը ընել, հրաւիրելով զանոնք անյապաղ ձեռնար-

կելու եւրոպական ֆաղաքակրթութեան ու Խաղաղութեան շահերուն համար հարկաւոր այդ գործին:

Ֆրանքո-թիւրք վեճը յառաջ բերող սահմանափակ խնդիրները կարգադրուած ըլլալով, Ֆրանսայի կողմէն Եւրոպայի եղած այգորինակ կոչ մը աւելի ուժ պիտի ունենար՝ ա՛յ ո՛չ մէկ տարակոյս թողլով զայն պատճառող բացարձակապէս անշահախնդիր ոգիին վրայ, ու անիկա չպիտի կրնար անպատասխանի մնալ: Կը կարծենք որ Ֆրանսան բնաւ ինքզինքը չպիտի վտանգէր և իր ազնիւ աւանդութիւններուն պատշաճ գործ մը կատարած պիտի ըլլար Գեոպանաժողով մը զուսմարելու հրահրելով Պերլինի զաշնագրութեան ստորագիր պետութիւնները, որպէս զի որոշեն պէտք եղած միջոցները, գործադրել տալու համար Պերլինի զաշնագրութեան՝ թիւրքիոյ հայաբնակ գաւառներու մէջ մտցուելիք բարեկարգութեանց վերաբերող կէտերը:

Ֆրանսական նաւատորմին վերջին ցոյցը վաղանցուկ արդիւնք մը պիտի ունենար միայն, եթէ իր ետին ձգէր Արևելքի քրիստոնեաները իրենց շարչարուած գերիի վիճակին մէջ: Նոյնիօք, այս պայմաններուն մէջ, անոնց տառապանքները աւելցուցած ու Խաղաղութեան օպառնացող վտանգը սրցուցած պիտի ըլլար միայն: Ֆրանքո-թիւրք վեճը, Բոսնիայի Ֆրանքո-տուս տեսակցութիւնը, հայկական դատին պաշտպաններուն ֆրանսացի եւ ուրիշ գիւնադէտներու կողմէ եղած լաւ ընդունելութիւնը մը տաժել տուին Հայերուն թէ Ֆրանսա եւ Ռուսիա վերջապէս որոշած էին այլ եւ մինակ չձգել զիրենք թըրքական բարբարոսութեան դէմ իրենց տաժանելի մաքառումին մէջ: Եթէ այս անգամ ալ Եւրոպան խոստումադրութեամբ պիտի գտնուի իր յանձնառութեանց, ինքն իսկ հայերը մղած պիտի ըլլայ յուսահատութեան արհնատ խրատներուն հետեւելու, քանի որ անկարելի է մեզի անսահմանօրէն հանդուրժել որ մարդկային կերպարանքով հրէշներ շարունակեն անպատիժ մեր եղբայրներուն արհնին մէջ թաթղուելու և մեր օճախներուն պատիւը պղծելու:

Եթէ Եւրոպան իրաւցնէ մտադրած է այս հակամարդկային վիթխարի օճիրին մէջ մինչեւ վերջը մեղսակից մնալ Սուլթանին, թո՛ղ յայտարարէ շտիկ շիտակ: Հայ ժողովուրդը՝ մահուան դատապարտուած՝ Եւրոպայէն ու Սուլթանէն միանգամայն՝ պիտի գիտնայ ազնուօրէն մեռնիլ: Իր հոգեվարքին գերագոյն ցունցը պիտի կրնար թիւրքիոյ վերջնական կործանումը պատճառել ու տակնուվրայումը՝ անարգարութեան վրայ հիմնուած եւրոպական օտաճախի Խաղաղութեան:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՀՆՁԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Լոսանո, 22 Նոյեմբեր 1901

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

«Թայմզ»ի քարիզեաւ բղրակիցը հետեւեալը կը գրէ, որոտն անհոտն առ վրդովիչ կարեւորագիւտը աւելորդ կը սեպենք շեշտել:

Չինական խնդիրներու վրայ հանրածանօթ հեղինակութիւն մը, Տքթ. Արեքս. Իւլաու, ինձ զրկած է հետեւեալ ծանուցագիրը, որուն կարեւորութեանը վրայ աւելորդ է ծանրանալ: Այս զաղտնի սոքիւմանը ինքնայատուկ նշանակութիւն և մեծ կարեւորութիւն ունի միանգամայն, որովհետեւ ի վեր կը հանէ այն յարատեւ ու կարծեօ անողօք եղանակը, որով Ռուսիա ամէն ուղղութեամբ առաջ կը տանի իր հօղային ընդարձակման և բազմամարդութեան քաղաքականութիւնը: Անոնք սր քիչ թէ շատ ուշադրութեամբ հետեւած են Ռուսիոյ յառաջխաղաց ընթացքին, աւելի իրազեկ պիտի ըլլան հետեւեալ սողերը կարգալով:

«Երկարատեմէ ի վեր ա՛յ յայտնի եղած է, թէ Ռուս կառավարութեան տեսակէտը՝ հայկական խնդրին մասին, քոլորովին տարբեր է Արևմտեան Պետութիւններու տեսակէտէն: Կ. Պոլսոյ և Փոքր-Ասիոյ Հայոց վերաբերող խնդիրներու մէջ, Ռուսիա ամենագոյն շահագրգռութիւնն անգամ զգացած չէ. իր բոլոր ուշադրութիւնը դարձուցած է միշտ նոյն ինքն Հայաստանի կացութեան վրայ: Այդ գաւառներուն անմիջական դրացի՝ ինքը կուզէ անոնց դաւուրով իրապէս տէր դառնալ Եփրատի, և քաղաքական այս հաշիւը կը գլէ ամէն մարդասիրական նկատում:

«Ահա՛ թէ ինչու Արևմտեան պետութիւններու կողմանէ թեկադրուած վարչական բարենորոգումները չի կըրցան գործադրուիլ թիւրքիոյ մէջ, հակառակ Հայաստանի ահաւոր կացութեան: Իրերու այս վիճակը շատ հետաքրքրական եղանակով մը երեւան եկաւ Գաղղիոյ վերջին նաւային ցոյցին ժամանակ: Ֆրանսական կառավարութիւնը, Լոտանտօի խնդրոյն վաղընդօրթ կարգադրութեանը հետ, ուզեց պահանջել նաեւ գործադրութիւնը մէկ քանի բարենորոգումներու՝ Հայաստանի մասին: Վերջին պահուն սակայն Ռուսիա միջամտեց: Ֆրանսա չէր կրնար տեղի չի տալ ռուսական ճնշումին: Իր պահանջները յանկարծ դրամական խնդիրներու միայն սահմանափակուեցան, եւ կառավարութիւնը դժուարութեամբ կըրցա՛ հայկական խնդրին չի միջամտելու հարկին համոզել ֆրանսացիները:

«Ա՛յ յստակ է ուրեմն թէ ինչո՛ւ Ռուսիա կը հակառակի հայկական խնդիրը յուզելու այս վայրկեանիս: Անիկա այդ խնդիրը կարգադրելու վրայ է վերջնական կերպով մը, գէթ այնքանը սրբան իրեն կը վերաբերի:

Ռուսիոյ ներքին գործոց նախարար Գ. Սիբիւսկին, վերջին հոկ. 30ին, գաղտնի շրջաբերական յիշատակագիր մը ուղղելով Անդրկովկասի կառավարական պաշտօնեաներուն հետեւեալ եղանակով անոնց կը պարզէ Չարին կառավարութեան մտադրութիւնները:

«Չար ուշադրութիւնը կը հրաւիրեմ Անդրկովկասի մէջ ապաստանած հայ գաղթականներու անկանոն վիճակին վրայ: Տեղեկագիրները կը հաստատեն, թէ հայ գաղթականները Անդրկովկասէն հանելով, գանոնք նորէն Տաճկաստան ղրկելու ձեր բոլոր ջանքերը ի գերեւ ելած են, եւ թէ անոնց թիւը, փոխանակ պակսելու, երթալով աճելու վրայ է: Այս վայրկեանիս 40,000ը կ'անցնի: Անոնց մեծ մասը ապրուստի միջոցներէ բուրովին զրկուած է. առեւտուրի դժուարութիւնը, ինչպէս նաեւ ինքզինքնին հոգալու անհրաժեշտ հարկը զիրենց ոչ միայն ծանր բեռ մը դարձուցած է կառավարութեան, այլ եւ անհանգստութեան պատճառ մը՝ ժողովուրդին: Երեւոյթները ցոյց կուտան, թէ իրաց այս վիճակը վերջ պիտի չգտնէ շուտով: Գաղթականներէն շատերը ոչ միայն կը մերժեն թիւրքիս վերադառնալ, այլ նոյն իսկ թիւրք պաշտօնեաները յօժարութիւն չեն ցուցներ գանոնք նորէն իրենց երկիրը ընդունելու: Չբտեղեկագիրներուն նայելով՝ թիւրք հիւպատոսները կը մերժեն վիզէ ընել հայ գաղթականներուն վերադարձի անցագրերը: Հարկ է ուրեմն միշտ յիշել թէ այդ գաղթականները ա՛լ պիտի շարունակեն մնալ ուստական հողի վրայ: Բայց, այդ պարագային, իրենց արդի կացութիւնը՝ հանդէպ կառավարութեան՝ չի կրնար ըլլալ ան ինչ որ եղած է մինչեւ հիմա:

«Ուստի կը տեղեկացնեմ ձեզ, թէ բարձրագոյն որոշման համաձայն, պէտք է ձեռք առնէք բոլոր հարկաւոր միջոցները՝ 1902 մարտ 1ին առաւ հպատակութեան ստիպելու բոլոր հայ գաղթականները: Կը խնդրուի ուրեմն պատրաստել ցուցակները այն անձերուն օրոնք հաւանականաբար պիտի ազդուին այս օրէնքէն, եւ որոշել իրենց տրամադրութիւնը ապագայ զինուորական ծառայութեան մասին: Հարկ պիտի ըլլայ պատրաստել նաև հողային արձանագրութիւններ որպէս զի կարենանք օրոշել այն տեղերը ուր ուր հպատակութիւն ընդունող հայերը պիտի կրնան օգտակար կերպով հաստատուիլ, իբրև արքայական հողագործներ: Այս նպատակին համար պիտի քննուին այն հողերը զոր Տիւրքոստանները կը զօրժածէին նախապէս: Պէտք է ուրեմն կարելի եղածին չափ շուտով ձեր տեղեկագիրները այս մասին ղրկէք ձեր պետերուն:»

«Անշուշտ, Ռուսիոյ համար մեծապէս օգտակար պիտի ըլլայ 40,000 մարդ աւելի ունենալ Անդրկովկասի մէջ ուր անմշակ հողի անհուն տարածութիւններ կան զեռ: Գաղթականները պիտի յօժարին զինուորական ծառայութիւն ընել ու վերջը դառնալ հողագործ ըլլալ:

ատկա տարբեր խնդիր է: Այս ամէնուն մէջ, ինչպէս կը տեսնուի, բան մը հարցուած չէ Արեւմտեան Պետութիւններուն: Ռուսիոյ համար, ատկա օջանչելի եղանակ մըն է հայկական դժուարութիւններէն խայտելու: Յառաջիկային, եթէ հայկական խնդիրներ յուզուին նորէն, Ռուսիա պարզապէս պիտի հրաւիրէ բոլոր զժողովուրդը ուր հպատակութիւն ընդունելու եւ ալ եւ պատճառ պիտի չունենայ հայ ժողովուրդին ճակատագրով զբաղելու:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ Կ. ԳՈՒԼՄԷՆ

Կ. Պոլսէն հետևեալ ժամերակշիռ շտաբերը կը հազորդէն մեզի Կիլիկիոյ Կարողիկոսական խնդրին մէջ Օրմանեանի նորահնար գաւերուս վրայ:

Այս պահուս լուր առինք որ իբր թէ Չիվեր պէյ բերանացի կերպով Պատրիարքարանէն պահանջեր է որ՝ նախապէս Դրան հաղորդուած վեցանուն ընտրելիաց ցուցակին տեղ բոլոր ընտրեալներուն ցուցակը հաղորդուի նոյնութեամբ:

Ատկա Օրմանեանին կողմէ սարքուած մեքենայութիւն մըն է: Ասոր կառուած չի կայ: Թէ ինչու: Ահաւորիկ:

Օրմանեան, պզտիկ շնայու համար, ցուցակէն իր անունը վերցուցած ըլլալու տարածայնութիւնը կ'ընէ եւ միևնոյն ատեն, իր զրգումովը՝ Տէր Ներսէսեան վաշխառուին շարաշար զիմումներուն եւ շարախօսութիւններուն շնորհիւ, կը յաջողի Դուռը համազել որ իր անունին հետ—իբրև հրաժարող—վերցուին նաև Յովհաննէօսեանի եւ Մանկունիի անուններն ալ, ըսել տալով որ անոնք, սկիզբէն ի վեր, ընդդիմադիր գտնուած են միշտ Կիլիկիոյ ընտրութեան եղանակին մասին Դրան պահանջումներուն:

Ասով ահա երեք անուն ցանկէն ջնջուած կ'ըլլան, այդինքն ցանկը կէս առ կէս ջնջուած կ'ըլլայ: Իբրև է թէ Դուռը Մանկունիի եւ Յովհաննէօսեանի մասին իր վերջին խօսքը չէ ըսած, բայց միտքերը անոնց զէմ զրգուած են՝ տեղեկագրին Նախարարաց Խորհուրդին յանձնուելէն առաջ: Չիվեր պէյի մէկ բառը կը բաւէ արդէն ատոր համար:

Արդ, Կիլիկիացիներուն մօտ չըմեղանք մը գտնելու համար՝ ցանկին մէջէն երկու կարևոր անուններու հաւանական ջնջումին մասին, եւ իր ընտրելիութիւնը՝ հաւանակ ամէն ձախողուածի՝ զեռ յաջողցնելու յոյսով, Օր-

մանեան ձեռքի տակէ թելադրեր է Չիվերի որ ամբողջ
ցուցակը ուզուի Պատրիարքարանէն: Եւ ահա Չիվերն
ալ՝ քաջալերուած այս ընծայուած դիւրութենէն՝ բերա-
նացի պահանջեր է ամբողջ ցուցակը, քանի որ Օրման-
եան ինքը ընդառաջ կ'երթայ Դրան միտումներուն:

Երգրելին՝ աւելի ճիշդ՝ շնահանը հոն է ոսկայն
որ Օրմանեան չափցաւ այս քերականացի զիմումին վրայ
— որ իր գործն է— Խառն ժողով գումարել տալ՝ ազգու
հրահրագիր զրկելով և ինքզինքը բուրովին շուարած
ձեւացնելով:

Հինգշաբթի որ պիտի գումարուի ժողովը կրօնականի
անդամները ամենքն ալ պիտի երթան: Պատրիարքը
ժողովին պիտի հաղորդէ «Կիլիկիոյ կաթողիկոսական
ընտրութեան համար գումարուած ժողովին մէջ քու
առաջող 13 նպիտակութեան անունները պարունակող
ցուցակը Դրան մատուցանելու համար կրօնից անուշ
Վօսմ. Չիվեր պէյի կողմէ իրեն եղած զեկուցումը»:

Ժողովին արդիւնքը չը հաղորդենք ձեզի. կրնաք
ապահով ըլլալ որ շատ ազմկայոյզ պիտի ըլլայ: Օր-
մանեանի զիմակը ալ վար պիտի անեն, եթէ համբ-
բութիւնը չսանձէ նորէն կրօնականի անդամները, մա-
նաւանդ երկու ատենապետները:

Յայտնի է որ Քաղաքականի անդամները Օրման-
եանի թելադրութիւնը պիտի շօշափեն և 13 հոգիի ցու-
ցակ պիտի հաղորդեն, որպէս զի Դուռը ուզածը ընտրէ:
Օրմանեանը կամ Բարթոլոմէոսը... տեսնենք:

Պէտք է հրապարակել շուտով այս իրողութիւնը և
ազգել Օրմանեանի վրայ: Կրօնականի անդամները իրենք
զգացուցին պատրիարքին որ նոր երևոյթներէ զգուշա-
նայ և կիլիկեացուց վիճակը չվատթարացնէ նոր դժուա-
րութիւններ յարուցանելով ընտրական ձեւակերպու-
թեանց մէջ:

* * *

Վերջին ՊԱՀՈՒՆ

Կիլիկիոյ ինդրին վերջին փուլը

Կիլիկիոյ ինդրին մասնակից ելքը լաւ գաս մը եղաւ
Օրմանեանին, որ յանկարծակիի եկաւ քուէնհրու փոք-
րագոյնը շահելով, մինչդեռ ինքը կը կարծէր թէ Խապա-
եանէն յետոյ իր անունը պիտի երևէր: Քիչ զրամ չի
ծախսեց յաջողութիւնը իր կողմը ունենալու յոյսով:
Բայց ամէն բան ապարդիւն ելաւ: Կ'ուզէր ցանկը
գաղտնի պահել, կամ զէթ քուէնհրու աստիճանը հան-
րութեան չիմացնել: Անմիջապէս որ հեռագիրը կիլիկիայէն
պատրիարքին հասաւ և անուա ձախող արդիւնքը, Օր-
մանեան միջոցներ ձեռք առաւ, որպէս զի վեցանուն
ընտրեալները քուէնհրու աստիճանաւ չհրատարակուին,
այլ եկեղեցական դատաւորութեան կարևորութեանը կար-
գաւ: Իր այդ միջոցները օգուտ չունեցան սակայն: Տե-
ղական թերթ մը ընտրութեան անունը հրատարա-

կեց քուէնհրու կարգաւ: Միւս թերթերն ալ ապա հրա-
տարակեցին:

Օրմանեան Յրդ ընտրեալն էր:

Վերջին ծայր զայրացած ու ընկճուած է իր այս
հանդիսաւոր խաղքութենէն: Չգաց վերջապէս թէ ալ
յաջողելու յոյս չմնաց: Իր բովանդակ մատարութիւնն
կը երկու պաշտօնները միացնել, թէ՛ պատրիարքու-
թիւնը մշտնջենաւորելու համար և թէ՛ հոռոմայական հա-
յոց Գերեթիանիին պէտ՝ «Պատրիարք Կ. Պոլսոյ և Կա-
թողիկոս տանն Կիլիկիոյ» կարենալ կոչուելու համար:
Մին փառասիրութիւն կամ էսնաֆական ձգտում:

Սրբազրելի ցանկը Նախարարաց Խորհրդին մէջն է
հիմա: Ներկայ եպարքոսը նոր ըլլալուն՝ գործերուն բեր-
մունքով՝ կը քաջաշուի այս մեր ինդրին ալ:

Նոր եպարքոսին զէմ շատ հակառակութիւն կայ:
Հաւանօրէն պիտի հրամարի: Իր որոշ յատակադիժն
է եղեր այս անգամ բարենորոգութիւններ ներմուծել
տալ, բայց Սուլթանի շրջանակը գէշ կը մեկնի այս
գաղափարը:

Օրմանեան ատեն ատեն կը տարաձայնէ հիմա, թէ
կառավարութիւնը կ'ուզէ իր անունը հանել ցանկէն: Այս
քառքն ալ ինդրոյն մէջէն պատուաւոր կերպով դուրս
ելլելու համար է միայն ու ձեւ մըն է լոկ: Ինքը խառն
ժողովին ո՛ր և է այս օրինակ յայտարարութիւն չէ ըրած,
ասոր վստահ եղիք:


Օրմանեան, Յարութիւն փաշայի մահէն ի վեր,
աւելի սանձարձագ գործել սկսաւ: Ստեփան փաշայի
ծանր հիւանդութիւնն ալ եկաւ աւելի նպաստաւորել իր
«առանց հաշուետուութեան գործելու» երազը, զոր մա-
սամբ կ'իրակացնէ արդէն այսօր:

* * *

Դիտէք արդէն թէ կրօնական ժողովոյ անդամները
հրամարական տուին, եւ զիբը դատական Նախարարու-
թենէն Նախարարաց Խորհրդին յանձնուեցաւ, բայց
պատասխան չեկաւ դեռ: Կ'երևի որ չպիտի ընդունուի:

Այս կրօնականները՝ ինչ որ ալ ըսուի իրենց մասին՝
զէթ բաւական խելացի գտնուեցան միշտ, Քաղաքական
Ժողովոյ իրենց պաշտօնակից Դրան էֆէնտիներու թե-
լազրութիւնները չքաջալերելու չափ:

Խմբակ մը, որ դեռ ազդեցիկ է քիչ շատ Պատրիարք-
արանի գործերուն մէջ, օտիպեց զիրենք որ մինչեւ պա-
տասխան ելլելը շարունակեն պաշտօնին, ասպարէզը
բաց չձգելու համար: Անոնք ալ՝ ամէն կողմէ այս կարգի
եղած զիմումներուն զիջանելով՝ վերջ ի վերջոյ համա-
կերպեցան՝ սպասելով Դրան պատասխանին՝ Ժողովոյ
նիստերուն ներկայ գտնուիլ:



ԱԼԻՇՍՆ

Նոր Կեսեքի մէջ—ուր յեղափոխական ամուր ու հիմնական բրորականտի մը տարածութիւնը հոգը եւ ազգային անմիջական ու ստիպողական մտահոգութիւններ հագիւ ժամանակ կը ձգեն մեզ կանգ առնելու երբեմն ու Կոստիւն Ծամբուն վրայ ինկողներուն ու Գաղափարին համար զօհ- ուողներուն մեր եղբայրական հրածնշտը զրկելու—չենք կրնար սակայն՝ յուզուած ու ջերմեռանգ խոնարհուածով մը՝ չողջունել Հայութեան հորիզոնէն բաժնուող, հե- ապցող մեծ Հոգին:

Ալիշանի մահը ազգային տուգի մը համեմատու- թիւններն առաւ, ու պէ՛տք էր որ այդպէս ըլլար: Հա- յութեան կոտորած ու ցաւոտ սիրտն իսկ էր որ թունդ հանեց Ս. Ղազարի մենաստանէն հասնող գոյժը:

Ալիշան... Ինչ յուզումներ, ինչ պատանի արցունք- ներ, ինչ երիտասարդ խանդավառութիւններ չիչեցնենք մենէ ամէն մէկուն այս պաշտելի անունը:

Ազգերու՝ մանաւանդ մերինին պէս ստրկութենէ նորսթափող ու ասոր համար իսկ դժբաղդ ազգերու գո- յութեան մէջ գերազանց ու անմատչելի տեղ մը կը բռնեն մէկ քանի հազուագիւտ ընտրուած էակներ, ո- բոնք—գերագոյն բարձր արտասանած, նուիրական երգը երգած կամ խորհրդաւոր ու մոգական ժէօթը շարժած ըլլալուն՝ կարծես—նուիրագործուած հանրային բուռն ու անհաշիւ երախտագիտութենէն՝ ա՛լ կը դադրին օտվո- րական մահկանացունքը ըլլալէ ու գաղափարական մարմ- նացումներու, խորհրդանշաններու կը փոխուին: Անոնք հաւատքն են, հայրենասիրութիւնն են, անձնուիրու- թիւնն են: Անոնցմով, անոնց մէջէն կը բարձրանայ, կը հասնի ամբիւր է՛ն ազնիւ ու է՛ն շքեղ յղացում- ներուն: Անոնց անունը ամենքը կը ցնցէ ու կը խան- դափառէ, անոնց ձայնը հերոսներ կ'արթնցնէ ու ամ- բոխներ կրնայ շարժել: Ժողովուրդը իր օտւրբերուն ու հերոսներուն քով կը կախէ անոնց պատկերները, զա- նոնք կը փնտռէ ու կը տեսնայ շարունակ իր շփոթ մտքին մէջէն, անոնց կը դառնայ, ինչպէս դէպի փա- բոսներու: Ժողովուրդը անոնց մտիկ կ'ընէ, անոնց կը հաւատայ, անոնցմէն կը յուսայ, անոնցմով կը հպար- տանայ, անոնցմով կը սփոփուի, անոնցմով կ'ապրի: Եւ ասորկ ժողովուրդ մը որ չունի անոնցմէ, չի կրնար յուսալ լաւագոյն ճակատագրի մը:

Անոնցմէ եղաւ Ալիշան: Իր ձայնը՝ հեռուններէն միշտ հասած ու մշտական կարօտին գեղեցկութեամբը կրկնապէս սրտառուջ՝ մինչև վերջը անուշ եկաւ ամենուն ու արցունք բերաւ ամե- նուն աչքը: Իր դէմքը՝ հեռուններէն, օտար ափերէ,

նժդեհ ու անձանթ հորիզոններէ սպասուած, երազ- ուած, հոգետեսուած՝ անպատու մաքրութեան ու ա- ղիխարչ քաղցրութեան խորունկ ու անդիմադրելի հը- րապօյր մը պահեց, տարիներու բարդած մշուշին մէ- ջէն ու ազգային սուղերու սե վարագոյրին ետեւէն ընդ- նըշմարուելով միշտ աւելի մաքուր, աւելի պայծառ, ա՛լ գրեթէ տնտիւթական տեսիլի մը հանգոյն:

Ու Նահապետին անզուգական պատկերը անբիծ ու անօտուեր մնաց մինչեւ վերջը, որովհետեւ հոյակապ Հայը, իր երկար ու արգաւանդ կեանքին մէջ, չունե- ցաւ ո՛չ մէկ փառասիրութիւն, չձգտեցաւ ո՛չ մէկ պաշ- տօնի ու փայլուն դիրքի, այլ՝ արծիւի պէս հպարտ ու արհամարհոտ՝ թառած մնաց այն օխրալի բարձունքին վրայ ուր Հայութեան սէրն ու հիացումը դրեր էր զինքը: Հոնկէ երգեց, հոնկէ երկնեց անընդհատ թանկագին գործեր, մինչդեռ ուրիշներ՝ իրեն չափ ու թերեւ իրմէ աւելի ժողովուրդին սրտին մօտիկ՝ յաճախ շեղելով ի- րենց բուն կոչումէն ու ճշգրիտ գերէն՝ յուսախաբ ու հի- առթափ կ'ընէին զայն:

Ալիշան Ս. Ղազարի իր համեստ խուցը պահեց, վանական մնաց ու մնաց միանգամայն ժողովուրդին հետաւոր, այլ պաշտելի կուտը, որ օր մը օրանց շխախ- տեցաւ իր պատուանդանին վրայ եւ որուն, մինչեւ վերջը հաւատարիմ մնաց ազգին սիրտը:

Ուրիշներ, օւրիշ տեղ, պիտի բռնէ ինչ որ կարելի է ասանկ յարատեւ աշխատութեան ու յափշտակութեան փառաւոր կեանքի մը վրայ, պիտի վերլուծեն ու քրքրեն Ալիշանի գրական ու բանասիրական հօկայ գործը:

Մենք Հայ բարոյական ու մտաւորական վերա- ծնութեան է՛ն հզօր ու է՛ն սրտաշարժ դէմքերէն մէկն է զոր կը տեսնենք ու կը օրերնք իր մէջ:—Վերջինը գուցէ անոնցմէ, որոնք ստրուկ Հայուն ցնացած հոգին արթնցուցին ազգային հաւաքական կեանքի մը իտե- ալին, հայրենասիրական անշէջ կրակը վառեցին, հայ- րենի աւերակները շնչաւորեցին, Հայութիւնը վերըս- տեղծեցին ու — գիտակցաբար կամ ո՛չ—մեր ցեղին առջեւ բացին արիւնոտ ու փրկարար ճամբան Հայ Յե- ղափոխութեան:

ՀԱՍՅԷ

«ՆՈՐ ԿԵՍԵՔ»ի վերաբերեալ նամակ ու բաժ- նեցին զրկել հետեւեալ հասցէին.

REDACTION DU "NOR-GUIANK"
27, BATHURST GARDENS,
KENSAL RISE,
LONDON, N. W.

(ENGLAND.)